Լրամշակված նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-952-25.10.2024-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը սահմանում է բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության հիմնական սկզբունքները և կարգավորում է այդ ոլորտում պետական աջակցության իրականացման համակարգի ձևավորման և գործունեության հետ կապված հարաբերությունները:

Հոդված 2. Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին օրենսդրությունը

1. Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին օրենսդրությունը բաղկացած է սույն օրենքից, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից և այլ իրավական ակտերից:

2. Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվում են հետեւյալ հիմնական հասկացությունները.

1) **բարձր տեխնոլոգիաներ՝** նոր հնարավորությունների, տեղեկատվության, գիտելիքի, փորձի, նյութական միջոցների ամբողջություն, որը միտված է տնտեսությունում մրցունակ արտադրանք մշակելուն, ստեղծելուն, արտադրելուն, եւ որի հիմքում դրված են գիտատեխնիկական նորարարությունները, ներառյալ՝ տեղեկատվական տեխնոլոգիաները.

2) **տեղեկատվական տեխնոլոգիաներ՝** համակարգչային հիմքի վրա, մասնավորապես ծրագրային ապահովման, սպասարկման կամ կառավարման տեղեկատվական համակարգեր, ինչպես նաեւ բոլոր ձեւաչափերով տեղեկատվություն, ներառյալ՝ տվյալներ, պատկերներ (շարժական, անշարժ) ստեղծելու, փոխակերպելու, պահպանելու, պաշտպանելու, մշակելու, փոխանցելու եւ անվտանգ հայթայթելու համար օգտագործվող տեխնոլոգիաների բոլոր տեսակները.

3) **հարթակ՝** ինքնաշխատ ծրագրային համակարգ, որի միջոցով ներկայացվում են համապատասխան դիմումներն ու կազմակերպվում է պետական աջակցության տրամադրումը.

4) **վարձու աշխատող՝** աշխատանքային կամ քաղաքացիաիրավական պայմանագրին համապատասխան աշխատանքներ կատարող.

5) **բարձր տեխնոլոգիաների ոլորտի կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր՝** Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերեր, որոնց ավելացված արժեքի հարկի եւ (կամ) շրջանառության հարկի հարկային հաշվարկներով հայտարարագրած գործունեության բոլոր տեսակներից իրացման շրջանառության առնվազն 90%-ը պետական աջակցության տրամադրման հաշվետու ժամանակաշրջանում ձեւավորվել է բարձր տեխնոլոգիաների ոլորտի գործունեության տեսակներից: Բարձր տեխնոլոգիաների ոլորտի գործունեության տեսակների որոշման համար հիմք է ընդունվում սույն կետում նշված հաշվարկներով (հաշվետվությամբ) հայտարարագրած տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչները.

6) **լիազոր մարմին՝** բարձր տեխնոլոգիաների, տեղեկատվայնացման, տեղեկատվական տեխնոլոգիաների եւ ինովացիոն ոլորտներում Կառավարության քաղաքականությունը մշակող եւ իրականացնող լիազոր մարմին.

7) **պետական աջակցություն՝** բարձր տեխնոլոգիաների ոլորտի կազմակերպություններին կամ անհատ ձեռնարկատերերին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից սույն օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն յուրաքանչյուր եռամսյակ տրամադրվող գումար.

8)**մասնագիտական աշխատանք՝** Կառավարության կողմից սահմանված ցանկում ներառված զբաղմունքներով զբաղվող անձնակազմի մասնագիտական աշխատանք.

9) **աշխատանքային միգրանտ՝** օտարերկրյա քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող եւ Հայաստանի Հանրապետությունում օրինական աշխատանքային իրավունք ունեցող մասնագիտական աշխատանք կատարող վարձու աշխատող: Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող երկքաղաքացին սույն օրենքի իմաստով աշխատանքային միգրանտ չի համարվում.

10) **նոր աշխատող՝** առաջին անգամ բարձր տեխնոլոգիաների ոլորտ մուտք գործած եւ մասնագիտական աշխատանք կատարող վարձու աշխատող.

11) **հաշվետու ժամանակաշրջան՝** պետական աջակցության տրամադրման հաշվետու ժամանակաշրջան, որը հաշվարկվում է եռամսյակներով.

Հոդված 4. Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության սկզբունքները եւ նպատակները

1. Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցությունն իրականացվում է պետության եւ մասնավոր հատվածի համագործակցության, ինչպես նաեւ հրապարակայնության սկզբունքների հիման վրա:

2. Բարձր տեխնոլոգիաների ոլորտում պետական աջակցության նպատակն է բարձր տեխնոլոգիաների՝

1) մրցունակության բարձրացումը,

2) նոր աշխատուժի ներգրավումը,

3) աշխատողների հմտությունների շարունակական բարձրացումը,

4) որպես արտադրանք արտահանող երկրի դիրքերի ամրապնդումը:

Հոդված 5. **Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության իրականացումը**

1. Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության ենթակա գործունեության տեսակները՝ ըստ տնտեսական գործունեության դասակարգիչների, սահմանում է Կառավարությունը:

2. Բարձր տեխնոլոգիաների ոլորտի կազմակերպություններին կամ անհատ ձեռնարկատերերին (այսուհետ նաեւ՝ տնտեսավարող սուբյեկտ) կամ այլ սուբյեկտներին պետական աջակցությունը տրամադրվում է սույն օրենքով: Պետական աջակցության այլ ուղղություններ կարող են սահմանվել Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով եւ այլ օրենսդրական ակտերով:

3. Լիազոր մարմինը, հաշվի առնելով բարձր տեխնոլոգիաների ոլորտի զարգացման գերակայությունները՝ կարող է մշակել եւ Կառավարության հաստատմանը ներկայացնել պետական աջակցության տրամադրման այլ կարգեր:

4. Կառավարության կողմից սահմանված պետական աջակցության ենթակա տնտեսական գործունեության դասակարգիչներով սահմանված գործունեությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտներին պետական աջակցությունը տրամադրվում է՝

1) աշխատանքային միգրանտների համար, որոնք իրականացնում են մասնագիտական աշխատանք եւ համարվում են տվյալ տնտեսավարող սուբյեկտի վարձու աշխատողները: Սույն կետով սահմանված պետական աջակցությունը տնտեսավարող սուբյեկտին տրամադրվում է աշխատանքային միգրանտի՝ աշխատավարձի եւ դրան հավասարեցված այլ վճարումների կամ քաղաքացիական իրավական պայմանագրով աշխատանքի վարձատրության գծով հաշվարկված եկամտային հարկի գումարի 60 տոկոսի չափով.

2) նոր աշխատողների ներգրավման համար: Սույն կետով սահմանված պետական աջակցությունը տնտեսավարող սուբյեկտին տրամադրվում է նոր աշխատողի

աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների կամ քաղաքացիական իրավական պայմանագրով աշխատանքի վարձատրության գծով հաշվարկված եկամտային հարկի գումարի 60 տոկոսի չափով:

3) Կառավարության կողմից սահմանված պետական աջակցության ենթակա տնտեսական գործունեության դասակարգիչներով սահմանված գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ մասնագիտական աշխատանք կատարող կադրերի պատրաստման եւ վերապատրաստման (այսուհետ՝ վերապատրաստում) համար: Սույն կետով սահմանված պետական աջակցությունը տնտեսավարող սուբյեկտին տրամադրվում է, վերապատրաստում անցած մասնագիտական աշխատանք կատարող վարձու աշխատողի աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների կամ քաղաքացիական իրավական պայմանագրով աշխատանքի վարձատրության գծով հաշվետու ժամանակաշրջանում հաշվարկված եկամտային հարկի գումարի 50 տոկոսի չափով:

5. Կառավարության կողմից սահմանված պետական աջակցության ենթակա տնտեսական գործունեության դասակարգիչներով սահմանված գործունեությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների վարձու աշխատող աշխատանքային միգրանտին տրամադրվում է աջակցություն՝ իր աշխատավարձի եւ դրան հավասարեցված այլ վճարումների կամ քաղաքացիական իրավական պայմանագրով աշխատանքի վարձատրության գծով հաշվարկված եկամտային հարկի գումարի 60 տոկոսի չափով:

6. Սույն հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետով սահմանված մասնագիտական աշխատանք կատարող կադրերի պատրաստումը և վերապատրաստումն իրենից ենթադրում է աշխատողի մասնագիտական նոր գիտելիքների ձեռքբերումը և շարունակական կատարելագործումը, որը հավաստվում է վերապատրաստումն իրականացող համապատասխան մասնագիտական կենտրոնի կողմից տրամադրված փաստաթղթով:

7. Սույն հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի կիրառության դեպքում տնտեսավարող սուբյեկտի կողմից ներկայացված վերապատրաստման հիմնավորումներն ուսումնասիրվում և ընդունվում են լիազոր մարմնի սահմանած կարգով:

8. Սույն հոդվածի 4-րդ մասի 1-ին, 2-րդ եւ 3-րդ կետերով և 5-րդ մասով սահմանված՝ հաշվետու ժամանակաշրջանի համար տրամադրվող պետական աջակցությունների հանրագումարը չի կարող գերազանցել նույն հաշվետու ժամանակաշրջանի մասով տվյալ տնտեսավարող սուբյեկտի բոլոր աշխատողների գծով հաշվարկված եկամտային հարկի գումարի 50 տոկոսը:

9. Սույն հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով սահմանված՝ նոր աշխատողների մասով պետական աջակցությունը տրամադրվում է վարձու աշխատողի՝ առաջին անգամ մասնագիտական աշխատանքի անցնելու պահից երեք օրացուցային տարիների համար:

10. Սույն հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով սահմանված պետական աջակցությունների տրամադրման կարգերը սահմանում է Կառավարությունը:

11. Սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված աջակցությունը տրամադրվում է հարկման ընդհանուր համակարգում եւ շրջանառության հարկի համակարգում գործող կազմակերպություններին եւ անհատ ձեռնարկատերերին՝ 2025 թվականի հունվարի 1-ից մինչեւ 2031 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածի համար: Ընդ որում, շրջանառության հարկի համակարգում գործող կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը աջակցությունից օգտվելն սկսելու օրացուցային տարվան հաջորդող երրորդ օրացուցային տարին լրանալուց հետո կարող է շարունակել օգտվել աջակցությունից, եթե գործում է հարկման ընդհանուր համակարգում:

Հոդված 6. Տնտեսավարող սուբյեկտներին ներկայացվող պահանջները

1. Պետական աջակցության համար կարող են դիմել հետեւյալ տնտեսավարող սուբյեկտները.

1) Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած առեւտրային կազմակերպությունները,

2) Հայաստանի Հանրապետությունում հաշվառված անհատ ձեռնարկատերերը:

2. Պետական աջակցության համար դիմող տնտեսավարող սուբյեկտների գործունեության իրականացման ոլորտը պետք է համապատասխանի Կառավարության կողմից սահմանված պետական աջակցության ենթակա տնտեսական գործունեության դասակարգիչներով սահմանված գործունեությանը կամ ներառի այն:

3. Սույն օրենքով սահմանված պահանջները բավարարող տնտեսավարող սուբյեկտները պետական աջակցություն ստանալու համար դիմում են կամավորության սկզբունքով՝ հարթակի միջոցով:

4. Տնտեսավարող սուբյեկտները պետական աջակցության ստացման համար հարթակի միջոցով ներկայացնում են դիմում: Պետական աջակցության համար դիմելու կարգը եւ դիմումին ներկայացվող պահանջները սահմանվում են լիազոր մարմնի կողմից:

5. Հարթակն ինքնաշխատ եղանակով բավարարում կամ մերժում է պետական աջակցության տրամադրումը:

Հոդված 7. Պետական աջակցության տրամադրման մերժման հիմքերը

1. Պետական աջակցության տրամադրման դիմումը մերժվում է, եթե՝

1) դիմած տնտեսավարող սուբյեկտը չի համապատասխանում սույն օրենքով սահմանված՝ պետական աջակցություն ստանալու իրավունք ունեցող տնտեսավարող սուբյեկտներին ներկայացվող պահանջներին.

2) դիմած տնտեսավարող սուբյեկտի 51 տոկոս եւ ավելի բաժնեմասի բաժնետերը կամ մասնակիցը կամ անհատ ձեռնարկատերը հանդիսացել է սույն օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ

մասով սահմանված՝ պետական աջակցության իրավունքից զրկված տնտեսավարող սուբյեկտի 51 եւ ավելի բաժնեմասի բաժնետեր կամ մասնակից կամ անհատ ձեռնարկատեր.

3) Պետական աջակցություն ստանալու համար ներկայացված տվյալները թերի են կամ չեն համապատասխանում սույն օրենքի եւ այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջներին.

4) դիմումի ներկայացման օրվան նախորդող օրվա դրությամբ ունեն 100 հազար դրամը գերազանցող՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ:

Հոդված 8. Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության դադարեցումը

1. Սույն օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պետական աջակցության տրամադրումը դադարեցվում է, եթե պետական աջակցության ստացման համար տնտեսավարող սուբյեկտը ներկայացրել է ոչ հավաստի տեղեկություններ:

2. Պետական աջակցության դադարեցման մասին որոշումն ընդունում է լիազոր մարմնի ղեկավարը՝ «Վարչարարության եւ վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված համապատասխան վարչական ակտի հիման վրա:

3. Պետական աջակցության դադարեցման դեպքում պետական աջակցություն ստացած տնտեսավարող սուբյեկտը պարտավոր է սույն հոդվածի 2-րդ մասում նշված վարչական ակտի մասին իրազեկվելուց հետո տասնօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վերադարձնել խախտումը ներառող ժամանակաշրջանում, սույն օրենքի շրջանակում, կոնկրետ դեպքով աջակցության համար տրամադրված գումարները:

4. Տնտեսավարող սուբյեկտը զրկվում է սույն օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պետական աջակցության ստացման իրավունքից, եթե մեկ տարվա ընթացքում տնտեսավարող սուբյեկտի մոտ հայտնաբերվել է դադարեցման հիմք հանդիսացող երկու եւ ավելի խախտման դեպք:

5. Լիազոր մարմինը սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված վարչական ակտի կայացումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում տվյալ տնտեսավարող սուբյեկտի մասին տվյալները հրապարակում է իր պաշտոնական կայքում:

Հոդված 9. Հրապարակայնությունը

1. Պետական աջակցություն ստացած, ինչպես նաեւ աջակցության համար դիմած եւ մերժված անձանց ցանկը հրապարակվում է լիազոր մարմնի պաշտոնական կայքում:

2. Լիազոր մարմնի պաշտոնական կայքում հրապարակվում են նաեւ սույն օրենքի պահանջները խախտած տնտեսավարող սուբյեկտների անվանումները:

Հոդված 10. Բարձր տեխնոլոգիաների ոլորտի վարչական ռեգիստրը

1. Բարձր տեխնոլոգիաների ոլորտի զարգացման համար ճյուղային հաշվառում իրականացնելու նպատակով լիազոր մարմինը հարթակում վարում է բարձր տեխնոլոգիաների ոլորտի վարչական ռեգիստրը (այսուհետ՝ վարչական ռեգիստր):

2. Վարչական ռեգիստրը ներառում է Հայաստանի Հանրապետությունում գրանցված (հաշվառված) բարձր տեխնոլոգիաների ոլորտի կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի փաստացի գործունեության կամ դրանց գտնվելու վայրի, գործունեության հիմնական եւ ոչ հիմնական տեսակների, աշխատողների քանակի, օտարերկրյա մասնակցության, արտադրված արտադրանքի, մատուցված ծառայությունների ծավալի, արտահանման, ներդրումների (այդ թվում՝ օտարերկրյա), եկամուտների, ներմուծման եւ այլ անհրաժեշտ ցուցանիշների մասին շարունակական արդիականացման ենթակա տվյալների բազան:

3. Վարչական ռեգիստրը ստեղծվում է պետական եկամուտների կոմիտեի, իրավաբանական անձանց պետական ռեգիստրի, լիազոր մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխանակված եւ տրամադրված տեղեկությունների, ինչպես նաեւ տնտեսավարող սուբյեկտների հաշվետվությունների հիման վրա:

4. Տնտեսավարող սուբյեկտների հաշվետվությունների ձեւերը եւ ներկայացման կարգը սահմանում է լիազոր մարմինը:

5. Կախված հավաքվող ցուցանիշների բնույթից՝ տնտեսավարող սուբյեկտների կողմից հաշվետվությունները ներկայացվում են ամսական, եռամսյակային կամ կիսամյակային պարբերականությամբ, որը որոշում է լիազոր մարմինը:

Հոդված 11. Տեղեկությունների տրամադրումը

1. Իրավաբանական անձանց եւ անհատ ձեռնարկատերերի պետական գրանցում (հաշվառում) իրականացնող մարմինը յուրաքանչյուր եռամսյակ լիազոր մարմին է ներկայացնում բարձր տեխնոլոգիաների ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների պետական գրանցման վերաբերյալ տեղեկությունները՝ Կառավարության սահմանած կարգով:

2. Պետական եկամուտների կոմիտեի կողմից լիազոր մարմնին տրամադրվող տեղեկությունների շրջանակը եւ տրամադրման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են լիազոր մարմնի ղեկավարի եւ Պետական եկամուտների կոմիտեի ղեկավարի համատեղ իրավական ակտով:

Հոդված 12. Պատասխանատվությունը սույն օրենքի դրույթները խախտելու համար

1. Սույն օրենքի պահանջների խախտումն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

2. Սույն օրենքի համաձայն բարձր տեխնոլոգիաների ոլորտի կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից հաշվետվությունները չներկայացնելը առաջացնում է վարչական պատասխանատվություն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով սահմանված չափերով:

Հոդված 13. Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մոնիթորինգը

1. Բարձր տեխնոլոգիաների ոլորտի զարգացման, պետական աջակցություն ստացած անձանց ներկայացվող պահանջների պահպանման նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով լիազոր մարմինն իրականացնում է մոնիթորինգ:

2. Մոնիթորինգն իրականացվում է տնտեսվարող սուբյեկտների վերաբերյալ տվյալների հավաքման, տվյալների ստուգման, համեմատման, գնահատման, վերլուծությունների իրականացման միջոցով:

3. Մոնիթորինգի իրականացման կարգը սահմանում է լիազոր մարմինը:

Հոդված 14. Եզրափակիչ եւ անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից եւ գործում է մինչեւ 2031 թվականի դեկտեմբերի 31-ը, բացառությամբ սույն օրենի 5-րդ հոդվածի 5-րդ մասի, որն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ից և տարածվում է աշխատանքային միգրանտ հանդիսացող վարձու աշխատողի համար 2026 թվականի հունվարի 1-ից հետո հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների կամ քաղաքացիական և իրավական պայմանագրով աշխատանքի վարձատրության գծով եկամտահարկի նկատմամբ:

2. Սույն օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետը գործում է մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը և տարածվում է աշխատանքային միգրանտ հանդիսացող վարձու աշխատողի համար մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների կամ քաղաքացիական և իրավական պայմանագրով աշխատանքի վարձատրության գծով եկամտային հարկի նկատմամբ:

3. Սույն օրենքով սահմանված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:

4. Սույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված հարթակը գործարկվում է ոչ ուշ քան 2025 թվականի հուլիսի 1-ը: Մինչեւ հարթակի գործարկումը տնտեսավարող սուբյեկտներից դիմումներն ընդունվում եւ մշակվում են լիազոր մարմնի ղեկավարի հաստատած կարգով:

Լրամշակված նախագիծ
Երկրորդ ընթերցում
~~Առաջին ընթերցում~~

Կ-952-25.10.2024-ՏՀ-011/1

ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը սահմանում է բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության հիմնական սկզբունքները և կարգավորում է այդ ոլորտում պետական աջակցության իրականացման համակարգի ձևավորման և գործունեության հետ կապված հարաբերությունները:

Հոդված 2. Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին օրենսդրությունը

1. Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին օրենսդրությունը բաղկացած է սույն օրենքից, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից և այլ իրավական ակտերից:

2. Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվում են հետեւյալ հիմնական հասկացությունները.

1) **բարձր տեխնոլոգիաներ՝** նոր հնարավորությունների, տեղեկատվության, գիտելիքի, փորձի, նյութական միջոցների ամբողջություն, որը միտված է տնտեսությունում մրցունակ արտադրանք մշակելուն, ստեղծելուն, արտադրելուն, եւ որի հիմքում դրված են գիտատեխնիկական նորարարությունները, ներառյալ՝ տեղեկատվական տեխնոլոգիաները.

2) **տեղեկատվական տեխնոլոգիաներ՝** համակարգչային հիմքի վրա, մասնավորապես ծրագրային ապահովման, սպասարկման կամ կառավարման տեղեկատվական համակարգեր, ինչպես նաեւ բոլոր ձեւաչափերով տեղեկատվություն, ներառյալ՝ տվյալներ, պատկերներ (շարժական, անշարժ) ստեղծելու, փոխակերպելու, պահպանելու, պաշտպանելու, մշակելու, փոխանցելու եւ անվտանգ հայթայթելու համար օգտագործվող տեխնոլոգիաների բոլոր տեսակները.

3) **հարթակ՝** ինքնաշխատ ծրագրային համակարգ, որի միջոցով ներկայացվում են համապատասխան դիմումներն ու կազմակերպվում է պետական աջակցության տրամադրումը.

4) **վարձու աշխատող՝** աշխատանքային կամ քաղաքացիաիրավական պայմանագրին համապատասխան աշխատանքներ կատարող.

5) **բարձր տեխնոլոգիաների ոլորտի կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր՝** Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերեր, որոնց ավելացված արժեքի հարկի եւ (կամ) շրջանառության հարկի հարկային հաշվարկներով հայտարարագրած գործունեության բոլոր տեսակներից իրացման շրջանառության առնվազն 90%-ը պետական աջակցության տրամադրման հաշվետու ժամանակաշրջանում ձեւավորվել է բարձր տեխնոլոգիաների ոլորտի գործունեության տեսակներից: Բարձր տեխնոլոգիաների ոլորտի գործունեության տեսակների որոշման համար հիմք է ընդունվում սույն կետում նշված հաշվարկներով (հաշվետվությամբ) հայտարարագրած տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչները.

6) **լիազոր մարմին՝** բարձր տեխնոլոգիաների, տեղեկատվայնացման, տեղեկատվական տեխնոլոգիաների եւ ինովացիոն ոլորտներում Կառավարության քաղաքականությունը մշակող եւ իրականացնող լիազոր մարմին.

7) **պետական աջակցություն՝** բարձր տեխնոլոգիաների ոլորտի կազմակերպություններին կամ անհատ ձեռնարկատերերին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից սույն օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն յուրաքանչյուր եռամսյակ տրամադրվող գումար.

8)**մասնագիտական աշխատանք՝** Կառավարության կողմից սահմանված ցանկում ներառված գբաղմունքներով զբաղվող անձնակազմի մասնագիտական աշխատանք.

9) **աշխատանքային միգրանտ՝** օտարերկրյա քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող եւ Հայաստանի Հանրապետությունում օրինական աշխատանքային իրավունք ունեցող մասնագիտական աշխատանք կատարող վարձու աշխատող: Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող երկքաղաքացին սույն օրենքի իմաստով աշխատանքային միգրանտ չի համարվում.

10) **նոր աշխատող՝** առաջին անգամ բարձր տեխնոլոգիաների ոլորտ մուտք գործած եւ մասնագիտական աշխատանք կատարող վարձու աշխատող.

11) **հաշվետու ժամանակաշրջան՝** պետական աջակցության տրամադրման հաշվետու ժամանակաշրջան, որը հաշվարկվում է եռամսյակներով.

~~8) **աշխատանքային միգրանտ՝** օտարերկրյա քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող եւ Հայաստանի Հանրապետությունում օրինական աշխատանքային իրավունք ունեցող մասնագիտական աշխատանք կատարող վարձու աշխատող: Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող երկքաղաքացին սույն օրենքի իմաստով աշխատանքային միգրանտ չի համարվում.~~

~~9) **նոր աշխատող՝** մինչեւ 30 տարեկանը ներառյալ, առաջին անգամ բարձր տեխնոլոգիաների ոլորտ մուտք գործած եւ Կառավարության կողմից սահմանված բարձր տեխնոլոգիական ոլորտի մասնագիտական աշխատանքների ցանկում ներառված գբաղմունքներով զբաղվող մասնագիտական վարձու աշխատող.~~

~~10) **մասնագիտական աշխատանք՝** Կառավարության կողմից սահմանված ցանկում ներառված գբաղմունքներով զբաղվող անձնակազմի մասնագիտական աշխատանք.~~

~~11) **պետական աջակցության տրամադրման հաշվետու ժամանակաշրջան՝** միգրանտների եւ նոր աշխատողների դեպքում՝ եռամսյակ, իսկ կադրերի պատրաստման եւ վերապատրաստման գծով՝ ավարտական վկայականի տրման օրը:~~

Հոդված 4. Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության սկզբունքները եւ նպատակները

1. Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցությունն իրականացվում է պետության եւ մասնավոր հատվածի համագործակցության, ինչպես նաեւ հրապարակայնության սկզբունքների հիման վրա:

2. Բարձր տեխնոլոգիաների ոլորտում պետական աջակցության նպատակն է բարձր տեխնոլոգիաների՝

1) մրցունակության բարձրացումը,

2) նոր աշխատուժի ներգրավումը,

3) աշխատողների հմտությունների շարունակական բարձրացումը,

4) որպես արտադրանք արտահանող երկրի դիրքերի ամրապնդումը:

~~***Հոդված 5.*** Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության իրականացումը~~

~~1. Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության ենթակա գործունեության տեսակները՝ ըստ տնտեսական գործունեության դասակարգիչների, սահմանում է Կառավարությունը:~~

~~2. Բարձր տեխնոլոգիաների ոլորտի կազմակերպություններին կամ անհատ ձեռնարկատերերին (այսուհետ նաեւ՝ տնտեսավարող սուբյեկտ) պետական աջակցությունը տրամադրվում է սույն օրենքով: Պետական աջակցության այլ ուղղություններ կարող են սահմանվել Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով եւ այլ օրենսդրական ակտերով:~~

~~3. Լիազոր մարմինը, հաշվի առնելով բարձր տեխնոլոգիաների ոլորտի զարգացման գերակայությունները՝ կարող է մշակել եւ Կառավարության հաստատմանը ներկայացնել պետական աջակցության տրամադրման այլ կարգեր:~~

~~4. Կառավարության կողմից սահմանված պետական աջակցության ենթակա տնտեսական գործունեության դասակարգիչներով նշված գործունեությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտներին պետական աջակցությունը տրամադրվում է՝~~

~~1) աշխատանքային միգրանտների ներգրավման համար, որոնք իրականացնում են մասնագիտական աշխատանք եւ համարվում են տվյալ տնտեսավարող սուբյեկտի վարձու աշխատողները: Սույն ենթակետով սահմանված պետական աջակցությունը տնտեսավարող սուբյեկտին տրամադրվում է աշխատանքային միգրանտի աշխատավարձի եւ դրան հավասարեցված այլ վճարումների գծով հաշվարկված եկամտային հարկի գումարի 50 տոկոսի չափով.~~

~~2) նոր աշխատողների ներգրավման համար, ընդ որում՝~~

~~ա. նոր աշխատողների աշխատավարձի եւ դրան հավասարեցված այլ վճարումների գծով հաշվարկված եկամտային հարկի գումարի 100 տոկոսի չափով, եթե տնտեսավարող սուբյեկտի բոլոր վարձու աշխատողների եռամսյակային միջին քանակը չի գերազանցում 30-ը,~~

~~բ. նոր աշխատողների աշխատավարձի եւ դրան հավասարեցված այլ վճարումների գծով հաշվարկված եկամտային հարկի գումարի 50 տոկոսի չափով, եթե տնտեսավարող սուբյեկտի բոլոր վարձու աշխատողների եռամսյակային միջին քանակը 31 եւ ավելի է.~~

~~3) Կառավարության կողմից հաստատված պետական աջակցության ենթակա տնտեսական գործունեության դասակարգիչներով սահմանված գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ մասնագիտական աշխատանք կատարող կադրերի պատրաստման եւ վերապատրաստման գծով կատարված կրթական ծախսերի փոխհատուցման նպատակով, ընդ որում՝~~

~~ա. տնտեսավարող սուբյեկտի մասնագիտական աշխատանք կատարող վարձու աշխատողների աշխատավարձի եւ դրան հավասարեցված այլ վճարումների գծով հաշվարկված եկամտային հարկի գումարի~~

~~50 տոկոսի չափով, եթե տնտեսավարող սուբյեկտի վարձու աշխատողների եռամսյակային միջին քանակը չի գերազանցում 30-ը,~~

~~բ. տնտեսավարող սուբյեկտի մասնագիտական աշխատանք կատարող վարձու աշխատողների աշխատավարձի եւ դրան հավասարեցված այլ վճարումների գծով հաշվարկված եկամտային հարկի գումարի 25 տոկոսի չափով, եթե վարձու աշխատողների եռամսյակային միջին քանակը 31 եւ ավելի է։~~

~~5. Սույն հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի «ա» ենթակետի կիրառման դեպքում փոխհատուցումը ներառում է նաեւ կադրերի պատրաստման եւ վերապատրաստման նպատակով տնտեսավարող սուբյեկտի կողմից կատարված գործուղման ծախսերը։~~

~~6. Սույն հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի կիրառության դեպքում տնտեսավարող սուբյեկտի միջոցներից կադրերի պատրաստման եւ վերապատրաստման հիմնավորումները (վկայական, վերապատրաստման ծախսերը հիմնավորող փաստաթղթեր եւ այլն) ուսումնասիրվում են լիազոր մարմնի կողմից։~~

~~7. Սույն հոդվածի 4-րդ մասի 2-րդ եւ 3-րդ կետերի կիրառության նպատակով՝ վարձու աշխատողների եռամսյակային միջին քանակը որոշվում է հետեւյալ կերպ՝~~

~~1) Գործող տնտեսավարող սուբյեկտի համար՝ տվյալ եռամսյակի յուրաքանչյուր ամսվա վերջին օրվա դրությամբ վարձու աշխատողների քանակների հանրագումարը հարաբերելով 3-ի։~~

~~2) Տվյալ եռամսյակում նոր ստեղծված (հաշվառված) տնտեսավարող սուբյեկտի համար՝ ստեղծման (հաշվառման) օրվանից մինչեւ եռամսյակի վերջը ընկած ժամանակահատվածում յուրաքանչյուր ամսվա վերջին օրվա դրությամբ աշխատողների քանակների հանրագումարը հարաբերելով տվյալ տնտեսավարող սուբյեկտի ստեղծման (հաշվառման) օրվանից մինչեւ եռամսյակի վերջն ընկած ժամանակահատվածի ամիսների (այդ թվում՝ ոչ ամբողջական ամիսների) թվի վրա։~~

~~3) Եթե տնտեսավարող սուբյեկտը ստեղծվել (հաշվառվել) է տվյալ եռամսյակի վերջին ամսին, ապա աշխատողների միջին եռամսյակային քանակ է համարվում այդ ամսվա վերջին օրվա դրությամբ կազմակերպության եւ անհատ ձեռնարկատիրոջ մոտ առկա աշխատողների քանակը։~~

~~8. Սույն հոդվածի 4-րդ մասի 1-ին, 2-րդ եւ 3-րդ կետերով սահմանված՝ հաշվետու ժամանակաշրջանի համար տրամադրվող պետական աջակցությունների հանրագումարը չի կարող գերազանցել նույն հաշվետու ժամանակաշրջանի մասով տվյալ տնտեսավարող սուբյեկտի բոլոր աշխատողների գծով հաշվարկված եկամտային հարկի գումարի 50 տոկոսը։~~

~~9. Սույն հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով սահմանված՝ նոր աշխատողների մասով պետական աջակցությունը տրամադրվում է վարձու աշխատողի՝ առաջին անգամ մասնագիտական աշխատանքի անցնելու պահից երեք օրացուցային տարիների համար։~~

~~10. Սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված պետական աջակցությունների տրամադրման կարգերը սահմանում է Կառավարությունը։~~

~~11. Սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված աջակցությունը տրամադրվում է հարկման ընդհանուր համակարգում եւ շրջանառության հարկի համակարգում գործող կազմակերպություններին եւ անհատ ձեռնարկատերերին՝ 2025 թվականի հունվարի 1-ից մինչեւ 2032 թվականի հունվարի 1-ը ընկած ժամանակահատվածի համար։ Ընդ որում, շրջանառության հարկի համակարգում գործող կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը աջակցությունից օգտվելն սկսելու օրացուցային տարվան հաջորդող երրորդ օրացուցային տարին լրանալուց հետո կարող է շարունակել օգտվել աջակցությունից, եթե գործում է հարկման ընդհանուր համակարգում։~~

Հոդված 5. **Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության իրականացումը**

1. Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության ենթակա գործունեության տեսակները՝ ըստ տնտեսական գործունեության դասակարգիչների, սահմանում է Կառավարությունը:

2. Բարձր տեխնոլոգիաների ոլորտի կազմակերպություններին կամ անհատ ձեռնարկատերերին (այսուհետ նաեւ՝ տնտեսավարող սուբյեկտ) կամ այլ սուբյեկտներին պետական աջակցությունը տրամադրվում է սույն օրենքով: Պետական աջակցության այլ ուղղություններ կարող են սահմանվել Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով եւ այլ օրենսդրական ակտերով:

3. Լիազոր մարմինը, հաշվի առնելով բարձր տեխնոլոգիաների ոլորտի զարգացման գերակայությունները՝ կարող է մշակել եւ Կառավարության հաստատմանը ներկայացնել պետական աջակցության տրամադրման այլ կարգեր:

4. Կառավարության կողմից սահմանված պետական աջակցության ենթակա տնտեսական գործունեության դասակարգիչներով սահմանված գործունեությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտներին պետական աջակցությունը տրամադրվում է՝

1) աշխատանքային միգրանտների համար, որոնք իրականացնում են մասնագիտական աշխատանք եւ համարվում են տվյալ տնտեսավարող սուբյեկտի վարձու աշխատողները: Սույն կետով սահմանված պետական աջակցությունը տնտեսավարող սուբյեկտին տրամադրվում է աշխատանքային միգրանտի՝ աշխատավարձի եւ դրան հավասարեցված այլ վճարումների կամ քաղաքացիական իրավական պայմանագրով աշխատանքի վարձատրության գծով հաշվարկված եկամտային հարկի գումարի 60 տոկոսի չափով.

2) նոր աշխատողների ներգրավման համար: Սույն կետով սահմանված պետական աջակցությունը տնտեսավարող սուբյեկտին տրամադրվում է նոր աշխատողի աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների կամ քաղաքացիական իրավական պայմանագրով աշխատանքի վարձատրության գծով հաշվարկված եկամտային հարկի գումարի 60 տոկոսի չափով:

3) Կառավարության կողմից սահմանված պետական աջակցության ենթակա տնտեսական գործունեության դասակարգիչներով սահմանված գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ մասնագիտական աշխատանք կատարող կադրերի պատրաստման եւ վերապատրաստման (այսուհետ՝ վերապատրաստում) համար: Սույն կետով սահմանված պետական աջակցությունը տնտեսավարող սուբյեկտին տրամադրվում է, վերապատրաստում անցած մասնագիտական աշխատանք կատարող վարձու աշխատողի աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների կամ քաղաքացիական իրավական պայմանագրով աշխատանքի վարձատրության գծով հաշվետու ժամանակաշրջանում հաշվարկված եկամտային հարկի գումարի 50 տոկոսի չափով:

5. Կառավարության կողմից սահմանված պետական աջակցության ենթակա տնտեսական գործունեության դասակարգիչներով սահմանված գործունեությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների վարձու աշխատող աշխատանքային միգրանտին տրամադրվում է աջակցություն՝ իր աշխատավարձի եւ դրան հավասարեցված այլ վճարումների կամ քաղաքացիական իրավական պայմանագրով աշխատանքի վարձատրության գծով հաշվարկված եկամտային հարկի գումարի 60 տոկոսի չափով:

~~5~~6. Սույն հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետով սահմանված մասնագիտական աշխատանք կատարող կադրերի պատրաստումը և վերապատրաստումն իրենից ենթադրում է աշխատողի մասնագիտական նոր գիտելիքների ձեռքբերումը և շարունակական կատարելագործումը, որը հավաստվում է վերապատրաստումն իրականացող համապատասխան մասնագիտական կենտրոնի կողմից տրամադրված փաստաթղթով:

~~6~~7. Սույն հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի կիրառության դեպքում տնտեսավարող սուբյեկտի կողմից ներկայացված վերապատրաստման հիմնավորումներն ուսումնասիրվում և ընդունվում են լիազոր մարմնի սահմանած կարգով:

~~7~~8. Սույն հոդվածի 4-րդ մասի 1-ին, 2-րդ եւ 3-րդ կետերով և 5-րդ մասով սահմանված՝ հաշվետու ժամանակաշրջանի համար տրամադրվող պետական աջակցությունների հանրագումարը չի կարող գերազանցել նույն հաշվետու ժամանակաշրջանի մասով տվյալ տնտեսավարող սուբյեկտի բոլոր աշխատողների գծով հաշվարկված եկամտային հարկի գումարի 50 տոկոսը:

~~8~~9. Սույն հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով սահմանված՝ նոր աշխատողների մասով պետական աջակցությունը տրամադրվում է վարձու աշխատողի՝ առաջին անգամ մասնագիտական աշխատանքի անցնելու պահից երեք օրացուցային տարիների համար:

~~9~~10. Սույն հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով սահմանված պետական աջակցությունների տրամադրման կարգերը սահմանում է Կառավարությունը:

~~10~~11. Սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված աջակցությունը տրամադրվում է հարկման ընդհանուր համակարգում եւ շրջանառության հարկի համակարգում գործող կազմակերպություններին եւ անհատ ձեռնարկատերերին՝ 2025 թվականի հունվարի 1-ից մինչեւ 2031 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածի համար: Ընդ որում, շրջանառության հարկի համակարգում գործող կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը աջակցությունից օգտվելն սկսելու օրացուցային տարվան հաջորդող երրորդ օրացուցային տարին լրանալուց հետո կարող է շարունակել օգտվել աջակցությունից, եթե գործում է հարկման ընդհանուր համակարգում:

Հոդված 6. Տնտեսավարող սուբյեկտներին ներկայացվող պահանջները

1. Պետական աջակցության համար կարող են դիմել հետեւյալ տնտեսավարող սուբյեկտները.

1) Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած առեւտրային կազմակերպությունները,

2) Հայաստանի Հանրապետությունում հաշվառված անհատ ձեռնարկատերերը:

2. Պետական աջակցության համար դիմող տնտեսավարող սուբյեկտների գործունեության իրականացման ոլորտը պետք է համապատասխանի Կառավարության կողմից սահմանված պետական աջակցության ենթակա տնտեսական գործունեության դասակարգիչներով սահմանված գործունեությանը կամ ներառի այն:

3. Սույն օրենքով սահմանված պահանջները բավարարող տնտեսավարող սուբյեկտները պետական աջակցություն ստանալու համար դիմում են կամավորության սկզբունքով՝ հարթակի միջոցով:

4. Տնտեսավարող սուբյեկտները պետական աջակցության ստացման համար հարթակի միջոցով ներկայացնում են դիմում: Պետական աջակցության համար դիմելու կարգը եւ դիմումին ներկայացվող պահանջները սահմանվում են լիազոր մարմնի կողմից:

5. Հարթակն ինքնաշխատ եղանակով բավարարում կամ մերժում է պետական աջակցության տրամադրումը:

Հոդված 7. Պետական աջակցության տրամադրման մերժման հիմքերը

1. Պետական աջակցության տրամադրման դիմումը մերժվում է, եթե՝

1) դիմած տնտեսավարող սուբյեկտը չի համապատասխանում սույն օրենքով սահմանված՝ պետական աջակցություն ստանալու իրավունք ունեցող տնտեսավարող սուբյեկտներին ներկայացվող պահանջներին.

2) դիմած տնտեսավարող սուբյեկտի 51 տոկոս եւ ավելի բաժնեմասի բաժնետերը կամ մասնակիցը կամ անհատ ձեռնարկատերը հանդիսացել է սույն օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված՝ պետական աջակցության իրավունքից զրկված տնտեսավարող սուբյեկտի 51 եւ ավելի բաժնեմասի բաժնետեր կամ մասնակից կամ անհատ ձեռնարկատեր.

3) Պետական աջակցություն ստանալու համար ներկայացված տվյալները թերի են կամ չեն համապատասխանում սույն օրենքի եւ այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջներին.

4) դիմումի ներկայացման օրվան նախորդող օրվա դրությամբ ունեն 100 հազար դրամը գերազանցող՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ:~~, բացառությամբ եկամտային հարկի գծով պարտավորությունների, որոնք պետք է ամբողջությամբ կատարված լինեն:~~

Հոդված 8. Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության դադարեցումը

1. Սույն օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պետական աջակցության տրամադրումը դադարեցվում է, եթե պետական աջակցության ստացման համար տնտեսավարող սուբյեկտը ներկայացրել է ոչ հավաստի տեղեկություններ:

2. Պետական աջակցության դադարեցման մասին որոշումն ընդունում է լիազոր մարմնի ղեկավարը՝ «Վարչարարության եւ վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված համապատասխան վարչական ակտի հիման վրա:

3. Պետական աջակցության դադարեցման դեպքում պետական աջակցություն ստացած տնտեսավարող սուբյեկտը պարտավոր է սույն հոդվածի 2-րդ մասում նշված վարչական ակտի մասին իրազեկվելուց հետո տասնօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վերադարձնել խախտումը ներառող ժամանակաշրջանում, սույն օրենքի շրջանակում, կոնկրետ դեպքով աջակցության համար տրամադրված գումարները:

4. Տնտեսավարող սուբյեկտը զրկվում է սույն օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պետական աջակցության ստացման իրավունքից, եթե մեկ տարվա ընթացքում տնտեսավարող սուբյեկտի մոտ հայտնաբերվել է դադարեցման հիմք հանդիսացող երկու եւ ավելի խախտման դեպք:

5. Լիազոր մարմինը սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված վարչական ակտի կայացումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում տվյալ տնտեսավարող սուբյեկտի մասին տվյալները հրապարակում է իր պաշտոնական կայքում:

Հոդված 9. Հրապարակայնությունը

1. Պետական աջակցություն ստացած, ինչպես նաեւ աջակցության համար դիմած եւ մերժված անձանց ցանկը հրապարակվում է լիազոր մարմնի պաշտոնական կայքում:

2. Լիազոր մարմնի պաշտոնական կայքում հրապարակվում են նաեւ սույն օրենքի պահանջները խախտած տնտեսավարող սուբյեկտների անվանումները:

Հոդված 10. Բարձր տեխնոլոգիաների ոլորտի վարչական ռեգիստրը

1. Բարձր տեխնոլոգիաների ոլորտի զարգացման համար ճյուղային հաշվառում իրականացնելու նպատակով լիազոր մարմինը հարթակում վարում է բարձր տեխնոլոգիաների ոլորտի վարչական ռեգիստրը (այսուհետ՝ վարչական ռեգիստր):

2. Վարչական ռեգիստրը ներառում է Հայաստանի Հանրապետությունում գրանցված (հաշվառված) բարձր տեխնոլոգիաների ոլորտի կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի փաստացի գործունեության կամ դրանց գտնվելու վայրի, գործունեության հիմնական եւ ոչ հիմնական տեսակների, աշխատողների քանակի, օտարերկրյա մասնակցության, արտադրված արտադրանքի, մատուցված ծառայությունների ծավալի, արտահանման, ներդրումների (այդ թվում՝ օտարերկրյա), եկամուտների, ներմուծման եւ այլ անհրաժեշտ ցուցանիշների մասին շարունակական արդիականացման ենթակա տվյալների բազան:

3. ~~Բարձր տեխնոլոգիաների ոլորտի վ~~Վարչական ռեգիստրը ստեղծվում է պետական եկամուտների կոմիտեի, իրավաբանական անձանց պետական ռեգիստրի, լիազոր մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխանակված եւ տրամադրված տեղեկությունների, ինչպես նաեւ տնտեսավարող սուբյեկտների հաշվետվությունների հիման վրա:

4. Տնտեսավարող սուբյեկտների հաշվետվությունների ձեւերը եւ ներկայացման կարգը սահմանում է լիազոր մարմինը:

5. Կախված հավաքվող ցուցանիշների բնույթից՝ տնտեսավարող սուբյեկտների կողմից հաշվետվությունները ներկայացվում են ամսական, եռամսյակային կամ կիսամյակային պարբերականությամբ, որը որոշում է լիազոր մարմինը:

Հոդված 11. Տեղեկությունների տրամադրումը

1. Իրավաբանական անձանց եւ անհատ ձեռնարկատերերի պետական գրանցում (հաշվառում) իրականացնող մարմինը յուրաքանչյուր եռամսյակ լիազոր մարմին է ներկայացնում բարձր տեխնոլոգիաների ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների պետական գրանցման վերաբերյալ տեղեկությունները՝ ~~Հայաստանի Հանրապետության կ~~Կառավարության սահմանած կարգով:

2. Պետական եկամուտների կոմիտեի կողմից լիազոր մարմնին տրամադրվող տեղեկությունների շրջանակը եւ տրամադրման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են լիազոր մարմնի ղեկավարի եւ Պետական եկամուտների կոմիտեի ղեկավարի համատեղ իրավական ակտով:

Հոդված 12. Պատասխանատվությունը սույն օրենքի դրույթները խախտելու համար

1. Սույն օրենքի պահանջների խախտումն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

2. Սույն օրենքի համաձայն բարձր տեխնոլոգիաների ոլորտի կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից հաշվետվությունները չներկայացնելը առաջացնում է վարչական պատասխանատվություն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով սահմանված չափերով:

Հոդված 13. Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մոնիթորինգը

1. Բարձր տեխնոլոգիաների ոլորտի զարգացման, պետական աջակցություն ստացած անձանց ներկայացվող պահանջների պահպանման նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով լիազոր մարմինն իրականացնում է մոնիթորինգ:

2. Մոնիթորինգն իրականացվում է տնտեսվարող սուբյեկտների վերաբերյալ տվյալների հավաքման, տվյալների ստուգման, համեմատման, գնահատման, վերլուծությունների իրականացման միջոցով:

3. Մոնիթորինգի իրականացման կարգը սահմանում է լիազոր մարմինը:

Հոդված 14. Եզրափակիչ եւ անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից եւ գործում է մինչեւ 2031 թվականի դեկտեմբերի 31-ը, բացառությամբ սույն օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի, որն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ից և տարածվում է աշխատանքային միգրանտ հանդիսացող վարձու աշխատողի համար 2026 թվականի հունվարի 1-ից հետո հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների կամ քաղաքացիական և իրավական պայմանագրով աշխատանքի վարձատրության գծով եկամտահարկի նկատմամբ:

2. Սույն օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետը գործում է մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը և տարածվում է աշխատանքային միգրանտ հանդիսացող վարձու աշխատողի համար մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների կամ քաղաքացիական և իրավական պայմանագրով աշխատանքի վարձատրության գծով եկամտային հարկի նկատմամբ:

~~2~~3. Սույն օրենքով սահմանված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:

~~3~~4. Սույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված հարթակը գործարկվում է ոչ ուշ քան 2025 թվականի հուլիսի 1-ը: Մինչեւ հարթակի գործարկումը տնտեսավարող սուբյեկտներից դիմումներն ընդունվում եւ մշակվում են լիազոր մարմնի ղեկավարի հաստատած կարգով:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-952-25.10.2024-ՏՀ-011/1) ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-952[1]-25.10.2024-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	***ԱԺ պատգամավոր Հ. Արշակյան***	«Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 9-րդ կետ	**Նախագիծ 1-ի 3-րդ հոդվածի 9-րդ կետում սահմանված է «նոր աշխատող» հասկացությունը.** Առաջարկվում է վերոգրյալ հասկացությունը խմբագրել հետևյալ կերպ. 9) **նոր աշխատող՝** ~~մինչև 30 տարեկանը ներառյալ~~, առաջին անգամ բարձր տեխնոլոգիաների ոլորտ մուտք գործած և կառավարության կողմից սահմանված բարձր տեխնոլոգիական ոլորտի մասնագիտական աշխատանքների ցանկում ներառված զբաղմունքներով զբաղվող մասնագիտական վարձու աշխատող. Նպատակ ունենալով ավելացնել տեխնոլոգիական ոլորտի աշխատողների թվաքանակը, կարծում եմ, որ չպետք է լինեն տարիքային սահմանափակումներ: Միգուցե, ըստ վիճակագրության մինչև 30 տարեկան անձը ավելի մեծ հավանականությամբ կհաջողի նոր մասնագիտություն ուսանելու կամ մասնագիտությունը փոփոխելու հարցում, բայցև գտնում եմ, որ այդ կարգավորումը պետք է կատարվի ոչ թե օրենսդրության, այլ շուկայի կողմից:	**Ընդունվել է:** **Տե՛ս սույն ամփոփաթերթով ներկայացված՝ Կառավարության 1-ին առաջարկությունը**, որով նախատեսվում է խմբագրել նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 8-11-րդ կետերը:	**Ընդունվել է:**

			Աշխատանքային իրավահարաբերություններում տարիքային խտրականությունը բացառող մի շարք միջազգային կոնվենցիաներ կան, որոնք ուղղված են բոլոր աշխատողների իրավունքների պաշտպանությանը և հավասար հնարավորությունների ապահովմանը՝ անկախ տարիքից: 1958 թվականին ընդունված **Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) Կոնվենցիա 111-ը** արգելում է խտրականությունը աշխատանքի և զբաղվածության ոլորտներում՝ ներառյալ տարիքային հիմքով խտրականությունը: Կոնվենցիան պարտադրում է անդամ պետություններին ապահովել հավասար հնարավորություններ և վերաբերմունք աշխատանքում և մասնագիտական կրթության մեջ: **Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) Կոնվենցիա 142 (Մասնագիտական կողմնորոշման և մասնագիտական ուսուցման մասին կոնվենցիա, 1975 թ.)** կարևորում է, որ աշխատանքային իրավունքներում և մասնագիտական ուսուցման մեջ հավասար պայմաններ ապահովվեն բոլորի համար՝ ներառյալ տարիքային խտրականության բացառումը: **ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրն** (ICESCR) ընդգծում է աշխատանքի և կրթության ոլորտներում սեռի և տարիքային խտրականության բացառման անհրաժեշտությունը՝ պետություններին պարտավորեցնելով ստեղծել հավասար հնարավորություններ բոլոր տարիքի և սեռի անձանց համար: **ԵՄ Հավասար վերաբերմունքի մասին կարգադրությունը (2000/78/EC)** ուղղակիորեն արգելում է տարիքային խտրականությունը, հատկապես՝ աշխատանքի ընդունման, աշխատավարձերի և պայմանների վերաբերյալ:		
2.	***ԱԺ պատգամավոր Հ. Արշակյան***	«Բարձր տեխնոլոգիաներ ի ոլորտի պետական	Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասում, առաջարկվում է օրենքում սահմանել պետական աջակցության ենթակա գործունեության տեսակները.	**Չի ընդունվել:** Պետական աջակցության	**Չի ընդունվել:**

		աջակցության մասին» օրենքի նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մաս	ա. ծրագրային ապահովման մշակում, որը ներառում է ծրագրային ապահովման ստեղծումը, փոփոխությունների կատարումը, փորձարկումը և աջակցումը, պատվիրատուների համար կիրառական ծրագրերի ստեղծումը, համակարգերի ծրագրային ապահովման, կիրառական ծրագրերի, տվյալների հիմնապահեստների, վեբկայքերի կառուցվածքի ու բովանդակության մշակումը և (կամ) մշակման և գործարկման համար անհրաժեշտ մեքենայական հրամանների ստեղծումը, ծրագրային ապահովման սարքաբերումը՝ որոշակի գործառույթների իրականացման համար մշակված կիրառական ծրագրերի վերափոխումը և հարմարեցումը պատվիրատուների տեղեկատվական համակարգի միջավայրին, բ. խորհրդատվական գործունեություն համակարգչային տեխնոլոգիաների բնագավառում, որը ներառում է համակարգչային տեխնիկական միջոցների, ծրագրային ապահովման և կապի տեխնոլոգիաների ինտեգրված համակարգչային համակարգերի մշակումը և նախագծումը, օգտվողների ուսուցման հետ կապված ծառայությունները, գ. համակարգչային համակարգերի կառավարման գործունեություն, որը ներառում է ներցանցային կառավարումը և պատվիրատուների համար համակարգչային համակարգերի ստեղծումը և (կամ) տվյալների մշակման տեխնիկական միջոցների սպասարկումը և աջակցման այլ ծառայություններ, դ. տվյալների մշակում, ցանցում տեղեկատվության տեղաբաշխում և հարակից գործունեություն, որը ներառում է ցանցում կայքերի տեղաբաշխման ենթակառուցվածքների ապահովումը, տվյալների մշակումը (օգտագործողների տրամադրած կամ բնօրինակ ծրագրերի կիրառմամբ տվյալների լրիվ մշակումը, տվյալների ավտոմատացված մշակումն ու ներանցումն ապահովող ծառայությունները, ներառյալ՝ տվյալների հիմնապահեստների կառավարման ծառայությունները) և հարակից ծառայությունները, կայքերի տեղաբաշխման հետ կապված մասնագիտացված ծառայությունները (hosting service)՝ ինտերնետ ցանցում կայքերի տեղաբաշխում (Web hosting), տվյալների հոսընթաց փոխանցում (չբաժանված՝ ըստ փաթեթների)	ենթակա տնտեսական գործեության տեսակների ցանկը նպատակահարմար է սահմանել ՀՀ կառավարության որոշմամբ՝ հաշվի առնելով ոլորտի արագ զարգացումը: Նշվածը հիմնավորվում է նաև այն հանգամանքով, որ ՀՀ Կառավարության որոշմամբ սահմանվելու պարագայում փոփոխությունները կիրականացվեն առավել ճկուն ընթացակարգով: Հարկ է նշել, որ բարձր տեխնոլոգիաների ռազմավարության ընդունումից հետո միայն հնարավոր կլինի խմբագրել/լավարկել ցանկը:	

			կամ կիրառական ծրագրերի տեղաբաշխում, ծրագրային և ապարատային ռեսուրսների գործարկում, ընդհանուր ժամանակի տարանջատման ռեժիմում գործող կենտրոնական (համընդհանուր) համակարգչի միջոցով օգտվողների սպասարկում, ե. տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում կրթական, հետազոտական ծրագրերի իրականացում, զ. էլեկտրոնային համակարգերի նախագծում, թեստավորում և արտադրություն, համակարգչային անիմացիա և մոդելավորում, ինչպես նաև ինտեգրալային սխեմաների նախագծում և թեստավորում. է. էլեկտրոնային բաղադրամասերի և համակարգիչների, համակարգչային տեխնիկայի արտադրություն ը. կապի սարքավորանքի արտադրություն թ. օդանավերի, արբանյակների, այլ թռչոց սարքերի և/կամ դրանց համար նախատեսված սարքավորանքի մշակում և արտադրություն:		
3.	***ԱԺ պատգամավոր Հ. Արշակյան***	«Բարձր տեխնոլոգիաներ ի ոլորտի պետական աջակցության մասին» օրենքի նախագծի 5-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետ	**Նախագիծ 1-ի 5-րդ հոդվածի 4-րդ կետի 1-ին մասում սահմանված է, որ** Կառավարության կողմից սահմանված պետական աջակցության ենթակա տնտեսական գործունեության դասակարգիչներով նշված գործունեությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտներին պետական աջակցություն տրամադրվում է՝ 1) աշխատանքային միգրանտների ~~ներգրավման~~ համար, որոնք իրականացնում են մասնագիտական աշխատանք եւ համարվում են տվյալ տնտեսավարող սուբյեկտի վարձու աշխատողները: Սույն ենթակետով սահմանված պետական աջակցությունը տնտեսավարող սուբյեկտին տրամադրվում է աշխատանքային միգրանտի աշխատավարձի եւ դրան հավասարեցված այլ վճարումների գծով հաշվարկված եկամտային հարկի գումարի 50 տոկոսի չափով. Առաջարկում եմ Նախագիծ 1-ի 5-րդ հոդվածի 4-րդ կետի 1-ին մասից հանել «ներգրավման» բառը, քանի որ հստակ չէ, թե տվյալ նորմը վերաբերում է նոր	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

			ներգրավված աշխատանքային միգրանտներին, թե օրինակ 2022թվականին ներգրավվածներին:		
4.	***ԱԺ պատգամավոր Հ. Արշակյան***	«Բարձր տեխնոլոգիաներ ի ոլորտի պետական աջակցության մասին» օրենքի նախագծի 5-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետ	**5-րդ հոդվածի 4-րդ կետի 2-րդ մասում սահմանված է, որ** Կառավարության կողմից սահմանված պետական աջակցության ենթակա տնտեսական գործունեության դասակարգիչներով նշված գործունեությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտներին պետական աջակցություն տրամադրվում է՝ 2) նոր աշխատողների ներգրավման համար, ընդ որում՝ ~~ա. նոր աշխատողների աշխատավարձի եւ դրան հավասարեցված այլ վճարումների գծով հաշվարկված եկամտային հարկի գումարի 100 տոկոսի չափով, եթե տնտեսավարող սուբյեկտի բոլոր վարձու աշխատողների եռամսյակային միջին քանակը չի գերազանցում 30-ը,~~ ~~բ.~~ նոր աշխատողների աշխատավարձի եւ դրան հավասարեցված այլ վճարումների գծով հաշվարկված եկամտային հարկի գումարի 50 տոկոսի չափով~~, եթե տնտեսավարող սուբյեկտի բոլոր վարձու աշխատողների եռամսյակային միջին քանակը 31 եւ ավելի է.~~ 3) Կառավարության կողմից հաստատված պետական աջակցության ենթակա տնտեսական գործունեության դասակարգիչներով սահմանված գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ մասնագիտական աշխատանք կատարող կադրերի պատրաստման եւ վերապատրաստման գծով կատարված կրթական ծախսերի փոխհատուցման նպատակով, ընդ որում՝ ~~ա. տնտեսավարող սուբյեկտի մասնագիտական աշխատանք կատարող վարձու աշխատողների~~	**Ընդունվել է:** Տե՛ս սույն ամփոփաթերթով ներկայացված՝ Կառավարության 2-րդ առաջարկությունը, որի հիման վրա նախատեսվում է նոր խմբագրությամբ շարադրել նախագծի 5-րդ հոդվածը:	**Ընդունվել է:**

			~~աշխատավարձի եւ դրան հավասարեցված այլ վճարումների գծով հաշվարկված եկամտային հարկի գումարի 50 տոկոսի չափով, եթե տնտեսավարող սուբյեկտի վարձու աշխատողների եռամսյակային միջին քանակը չի գերազանցում 30 ը,~~ բ. տնտեսավարող սուբյեկտի մասնագիտական աշխատանք կատարող վարձու աշխատողների աշխատավարձի եւ դրան հավասարեցված այլ վճարումների գծով հաշվարկված եկամտային հարկի գումարի 25 տոկոսի չափով~~, եթե վարձու աշխատողների եռամսյակային միջին քանակը 31 եւ ավելի է:~~		
5.	***ԱԺ պատգամավոր Հ. Արշակյան***	«Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքի նախագծի **5-րդ հոդված**	**Առաջարկվում է Նախագիծ 1-ի 5-րդ հոդվածը լրացնել 5-րդ մասով հետևյալ խմբագրությամբ.** 5. Գիտական պոտենցիալը մեծացնելու և գիտական ենթակառուցվածքներում ներդրումները, ինչպես նաև գիտությանը՝ մասնավոր ընկերությունների կողմից պատվերներ տալը խթանելու նպատակով՝ կառավարության սահմանած կարգով, մասնավոր ընկերությունների կողմից գիտական հաստատություններում կատարված ուղղակի ներդրումներ (լաբորատոր սարքերի, սարքավորումների, ծրագրային գործիքների ձեռքբերում) կատարելու դեպքում, ներդրող կազմակերպությունը՝ կառավարության կողմից սահմանված չափանիշներին համապատասխանելու դեպքում, կստանա պետական աջակցություն՝ ներդրված գումարի 25 տոկոսի չափով, բայց ոչ ավելի քան վճարմանը նախորդող 12 ամիսների ընթացքում փաստացի վճարված եկամտային հարկի գումարի մեծության 50 տոկոսը:	**Չի ընդունվել:** Ներկայացված առաջարկը ողջունելի է: Այնուամենայնիվ, ներկայացված առաջարկին հնարավոր է անդրադառնալ Բարձր տեխնոլոգիաների ոլորտի ռազմավարության ընդունումից հետո:	**Չի ընդունվել:**
6.	***ԱԺ պատգամավոր Հ. Արշակյան***	«Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքի	**Առաջարկվում է Նախագիծ 1-ի 5-րդ հոդվածը լրացնել 6-րդ մասով հետևյալ խմբագրությամբ.** «Կրթության մասին» ՀՀ օրենքով սահմանված բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ կնքված պայմանագրի	**Չի ընդունվել:** Ներկայացված առաջարկը ողջունելի է: Կարևորում ենք	**Չի ընդունվել:**

		նախագծի **5-րդ հոդված**	շրջանակներում, կառավարության սահմանած չափորոշիչներին համապատասխան, կրթական ծրագրերի իրականացման դեպքում, պայմանագրի կողմ հանդիսացող տնտեսվարող սուբյեկտին տրամադրվում է պետական աջակցության կրթական ծրագրի շրջանակներում ուղղակի ներդրված գումարի 50 տոկոսի չափով, բայց ոչ ավելի քան վճարմանը նախորդող 12 ամիսների ընթացքում փաստացի վճարված եկամտային հարկի գումարի մեծության 25 տոկոսը:	կրթական ծրագրի շրջանակներում իրականացված ցանկացած ներդրումը: Գտնում ենք, որ այն կարևոր նշանակություն կարող է ունենալ ոլորտի զարգացման համար: Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ այս ուղղությամբ 2025թ. ծրագրերի շրջանակում նախատեսում ենք իրականացնել պիլոտային ծրագիր՝ դրամաշնորհային մրցույթի տեսքով:	
7.	***ԱԺ պատգամավոր Հ. Արշակյան***	«Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքի նախագծի **5-րդ հոդվածի 9-րդ կետ**	**Առաջարկվում է Նախագիծ 1-ի 5-րդ հոդվածի 9-րդ կետը խմբագրել հետևյալ կերպ.** 9. Սույն հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով սահմանված՝ նոր աշխատողների մասով պետական աջակցությունը տրամադրվում է վարձու աշխատողի՝ առաջին անգամ մասնագիտական աշխատանքի անցնելու պահից ~~երեք~~ երկու օրացուցային տարիների համար:	**Չի ընդունվել:** Նոր աշխատողների համար առաջին տարին դիտարկում ենք անցումային, որից հետո բուն մասնագիտական աշխատանք կատարելու և կայանալու համար երկու տարին այդքան էլ մեծ չէ:	**Չի ընդունվել:**

8.	***ԱԺ պատգամավոր Հ. Արշակյան***	«Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքի նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ	**Առաջարկվում է Նախագիծ 1-ի 7-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը խմբագրել հետևյալ կերպ.** 4) դիմումի ներկայացման օրվան նախորդող օրվա դրությամբ ունեն 100 հազար դրամը գերազանցող՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ, բացառությամբ եկամտային հարկի գծով պարտավորությունների, որոնք պետք է ամբողջությամբ կատարված լինեն: Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի. «Վարչարարությունը պետք է ուղղված լինի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակին, և դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր:» Ըստ էության, քիչ չեն դեպքերը, երբ հարկային հաշվարկների ճշգրտման և (կամ) հարկի գումարը միասնական հաշվին ոչ ճշգրիտ մուտք անելու և (կամ) այլ հարկերի հետ հաշվանցման արդյունքում, կարող են առաջանալ ոչ էական պարտավորություններ, և կարծում ենք, որ 100 հազ. դրամ պարտավորության առկայությունը ողջախոհ պարտավորության չափ է հանդիսանում նաև եկամտային հարկի գծով: Պետք է հաշվի առնել նաև, որ պետական բյուջե վճարվող հարկերի և վճարների մեծամասնությունը, գործող օրենսդրությամբ, վճարվում է միասնական հաշվին, և դրա տարանջատումն էլ իր հերթին է դառնալու վեճերի առարկա:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
9.	***ԱԺ պատգամավոր Հ. Արշակյան***	«Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքի նախագծի **անցումային դրույթ**	**Առաջարկում եմ Նախագիծ 1-ում ավելացնել անցումային դրույթ**, որով կսահմանվի, որ Նախագիծ 1-ի 5-րդ հոդվածի 4-րդ կետի 1-ին մասի դրույթը գործում է մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:	**Չի ընդունվել**, Քանի որ նախագծով տնտեսավարող սուբյեկտների համար ստեղծված բարենպաստ միջավայրը նախատեսվում է	**Չի ընդունվել**

				պահպանել առնվազն 7 տարի ժամկետով:	
10.	***ԱԺ պատգամավոր Հ. Արշակյան***	«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասի» օրենքի նախագծի 3-րդ հոդված	**Նախագիծ 2-ի հոդված 3-ում սահմանված է, որ** բացառապես Կառավարության սահմանած՝ բարձր տեխնոլոգիական ոլորտի գործունեության տեսակների ցանկում ներառված գործունեության տեսակներով զբաղվող ~~եւ տվյալ հարկային տարվա ընթացքում մինչեւ 30 (ներառյալ) վարձու աշխատողների եւ քաղաքացիաիրավական պայմանագրերի հիման վրա աշխատանք կատարող կամ ծառայություն մատուցող ֆիզիկական անձանց միջին տարեկան քանակ հայտարարագրած~~ առեւտրային կազմակերպությունների եւ անհատ ձեռնարկատերերի ստացած նպատակային դրամական միջոցները եկամուտ են համարվում այն հարկային տարում, երբ այդ դրամական միջոցները կամ այդ դրամական միջոցներով ձեռք բերված, կառուցված, ստեղծված կամ մշակված ակտիվները ճանաչվում են որպես ծախս կամ կորուստ՝ անկախ այդ ծախսը կամ կորուստը համախառն եկամտից նվազեցնելու հանգամանքից: ~~Որեւէ հարկային տարվա ընթացքում առեւտրային կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից հայտարարագրված վարձու աշխատողների եւ քաղաքացիաիրավական պայմանագրերի հիման վրա աշխատանք կատարող կամ ծառայություն մատուցող ֆիզիկական անձանց միջին տարեկան քանակը 30-ը գերազանցելու դեպքում դրամական միջոցների՝ դեռեւս եկամուտ չհամարված մասը եկամուտ է համարվում միջին տարեկան քանակը 30-ը գերազանցելու հարկային տարում:~~ Քանի որ այժմ փոքր բիզնեսի համար հասանելի են մի շարք աջակցության ծրագրեր՝ դրամաշնորհներ, միջազգային ցուցահանդեսներ, աքսելերացիոն և ինկուբացիոն ծրագրեր, ինչպես նաև, ելնելով հավասար մրցակցային պայմանների ապահովման սկզբունքից, առաջարկում եմ աշխատողների քանակական սահմանափակումները հանել վերոնշյալ հոդվածներից:	**Չի ընդունվել:** Սույն կարգավորման հետ կապված ՀՀ կառավարության կողմից ներկայացվում է առաջարկ, մասնավորապես «30 վարձու աշխատողների» քանակը փոխարինվում է «50 վարձու աշխատողների» քանակով: Հարկ է նկատել նաև, որ առաջարկությամբ վճարվող հարկի գումարի նվազեցում չի կատարվում, փոխարենը, հետաձգվում է հարկային պարտավորության առաջացման ժամկետը, ինչի թիրախը առավել շատ նոր ստեղծվող, նաև, փոքր բիզնեսն է, որն իրացվելիության խնդիր ունի:	**Չի ընդունվել**

				Խոշոր ընկերությունների այս մասով արտոնությունը չտրամադրելը կարևորվում է նաև պետական բյուջեի ընթացիկ իրացվելիության տեսանկյունից:	
11.	***ԱԺ պատգամավոր Հ. Արշակյան***	«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասի» օրենքի նախագծի 6-րդ հոդված	**Առաջարկվում է Նախագիծ 2-ի 6-րդ հոդվածի 3-րդ կետը շարադրել հետևյալ կերպ.** 3) Կառավարության սահմանած չափանիշներին համապատասխանող և Օրենսգրքի 121-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ մասնագիտական հանձնաժողովի դրական եզրակացությանն արժանացած գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների աշխատանքներում **(այդ թվում՝ սեփական կարիքների համար)** անմիջականորեն ռեզիդենտ շահութահարկ վճարողի կողմից ներգրավված՝ Կառավարության կողմից հաստատված բարձր տեխնոլոգիական ոլորտի մասնագիտական աշխատանքների ցանկում ներառված մասնագիտական անձնակազմի (բացառությամբ Հայաստանի Հանրապետությունում բնակության իրավունք (կացության կարգավիճակ) չունեցող օտարերկրյա քաղաքացիների ու քաղաքացիություն չունեցող ֆիզիկական անձանց) համար մասնագիտական աշխատանքի մասով հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների 200 տոկոսը, ~~բայց ոչ ավելի, քան տվյալ հարկային տարվա համար առանց սույն կետով և սույն մասի 8-րդ կետով սահմանված նվազեցումների՝ սույն բաժնով սահմանված կարգով հաշվարկված հարկման բազայի 50 տոկոսը:~~ Սույն կետով սահմանված նվազեցումը կատարվում է անկախ աշխատավարձը և դրան հավասարեցված այլ վճարումները շահութահարկով հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամտից նվազեցնելու հանգամանքից::	**Ընդունվել է մասնակի: Տե՛ս սույն ամփոփաթերթով ներկայացված՝ Կառավարության 10-րդ առաջարկությունը:** Հաշվի առնելով այն, որ այս արտոնությունից կարող են օգտվել նաև ոչ բարձր տեխնոլոգիական ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտները՝ պատգամավորի կողմից ներկայացված առաջարկության ընդունման դեպքում կստացվի այնպես, որ շահութահարկով	**Ընդունվել է մասնակի:**

			Կարծում եմ, որ շահութահարկի գծով նույնպես մրցակցային միջավայրի բարելավման խնդիր կա լուծելու. հատկանշական է, որ Վրաստանում միջազգային կազմակերպության կարգավիճակ ունեցող կազմակերպությունները վճարում են 5 տոկոս շահութահարկ, Ուզբեկստանում հարկային արտոնությունների շահառու անձանց շահութահարկի դրույքաչափը 0 տոկոս է, իսկ Ռումինիայում այն կարող է հասնել 0 տոկոսի:	հարկման բազան առանց սահմանափակման կարող են նվազեցնել նաև ոչ բարձր տեխնոլոգիական ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտները, ինչն ընդունելի չէ: Կառավարության կողմից առաջարկվում է շահութահարկով հարկման բազան առանց սահմանափակման կարող նվազեցնելու հնարավորություն տրամադրել բացառապես բարձր տեխնոլոգիական ոլորտում գործունեություն իրականացնող և գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումներ աշխատանքներ իրականացնող տնտեսավարող սուբյեկտներին:	

12.	***ԱԺ պատգամավոր Հ. Արշակյան***	«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասի» օրենքի նախագծի 7-րդ հոդվածի 2-րդ մաս	Նախագիծ 2-ի 7-րդ հոդվածի 2-րդ մասից հանել (բացառությամբ Հայաստանի Հանրապետությունում բնակության իրավունք (կացության կարգավիճակ) չունեցող օտարերկրյա քաղաքացիների ու քաղաքացիություն չունեցող ֆիզիկական անձանց) հատվածը և ավելացնել աշխատանքային միգրանտներ բառակապակցությունը՝ 1.1. Հարկային գործակալը Կառավարության սահմանած չափանիշներին համապատասխանող եւ Օրենսգրքի 121-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ մասնագիտական հանձնաժողովի դրական եզրակացությանն արժանացած գիտական հետազոտությունների եւ փորձարարական մշակումների աշխատանքներում (այդ թվում՝ սեփական կարիքների համար) ներգրավված՝ Կառավարության կողմից հաստատված բարձր տեխնոլոգիական ոլորտի մասնագիտական աշխատանքների ցանկում ներառված մասնագիտական անձնակազմին և **<u>աշխատանքային միգրանտներին</u>** վճարվող աշխատավարձից եւ դրան հավասարեցված այլ վճարումներից եկամտային հարկը հաշվարկում է 10 տոկոս դրույքաչափով:	**Չի ընդունվել:** Հայաստանի Հանրապետությունում բնակության իրավունք (կացության կարգավիճակ) չունեցող օտարերկրյա քաղաքացիների ու քաղաքացիություն չունեցող ֆիզիկական անձանց մասով բացառություն սահմանելը պայմանավորված է այն հանգամանքով, որ հարկային մարմին այդ անձանց մասով գրանցման հայտ չի ներկայացվում և հնարավոր չէ տարբերակել՝ անձը մասնագիտական աշխատանք կատարող է, թե ոչ: Ինչ վերաբերում է «աշխատանքային միգրանտ» բառակապակցությունն ավելացնելուն, ապա հայտնում ենք, որ դրա	**Չի ընդունվել:**

<table>
<tr>
<td></td>
<td></td>
<td></td>
<td></td>
<td>անհրաժեշտությունը բացակայում է, քանի որ առաջարկվող կարգավորումը կիրառելի է նաև աշխատանքային միգրանտների մասով, և բացառությունը վերաբերում է միայն քաղաքացիություն չունեցող այն ֆիզիկական անձանց, ովքեր չունեն կացության կարգավիճակ:</td>
<td></td>
</tr>
<tr>
<td>13.</td>
<td>ԱԺ պատգամավոր Հ. Արշակյան</td>
<td>«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասի» օրենքի նախագծի 8-րդ հոդված</td>
<td>Նախագիծ 2-ի 8-րդ հոդվածում փոփոխություն է նախատեսվում ՀՀ Հարկային օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասի աղյուսակի 8-րդ տողում.
<table>
<tr>
<td>«8)</td>
<td>Կառավարության սահմանած՝ բարձր տեխնոլոգիական ոլորտի գործունեության տեսակների ցանկում ներառված՝ գործունեության տեսակներից ստացվող եկամուտներ</td>
<td><s>2</s> 0»:</td>
</tr>
</table>
Առաջարկվում է խմբագրել 258-րդ հոդվածի 1-ին մասի աղյուսակի 8-րդ տողում նշված 2 տոկոս դրույքաչափը և դրա փոխարեն սահմանել 0 տոկոս շրջանառության հարկի դրույքաչափ:
Ըստ էության, Նախագիծ 1-ի և Նախագիծ 2-ի կարևորագույն նպատակներից է մրցակցային միջավայրի ձևավորումը և բարձր տեխնոլոգիական Հայաստանի Հանրապետության մրցունակության բարձրացումը:
Տարածաշրջանային երկրներից Վրաստանը VZP (վիրտուալ գոտու անձ)-ի կարգավիճակ ունեցող տնտեսվարողներին առաջարկում է շահութահարկի, ավելացված արժեքի հարկի և ներմուծումից հարկի 0 տոկոս դրույքաչափ և գույքահարկի ընդամենը 1 տոկոս դրույքաչափ: Կարծում եմ,</td>
<td>Ընդունվել է մասնակի:
Տե՛ս սույն ամփոփաթերթով ներկայացված՝ Կառավարության 13-րդ առաջարկությունը, որի ընդունման պարագայում
ՀՀ Հարկային օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասի աղյուսակի 8-րդ տողում շրջանառության հարկի 5 տոկոսը փոխարինվում է 1 տոկոսով:</td>
<td>Ընդունվել է մասնակի:</td>
</tr>
</table>

			որ տեխնոլոգիական ոլորտի գործունեության տեսակների համար շրջանառության հարկի դրույքաչափի 0 տոկոս սահմանումը կստեղծի մրցակցային միջավայր և հնարավորություն կընձեռի ոչ միայն, որպեսզի հազարավոր տնտեսվարողներ շարունակեն իրենց գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում, նաև կհանդիսանա խթան, որպեսզի նոր՝ փոքր և գերփոքր տնտեսվարողներ իրենց բիզնեսը տեղափոխեն ՀՀ՝ դրանով իսկ վճարելով սպառման հարկեր (ավելացված արժեքի հարկ, շրջանառության հարկ և այլն) և միևնույն ժամանակ մասնակցեն տեխնոլոգիական միջավայրի զարգացմանը և համախառն ներքին արդյունքի ավելացմանը:	Պատգամավորի առաջարկությունն ամբողջությամբ չընդունելու հիմնավորումը հետևյալն է. Եթե խոսքը վերաբերում է Վրաստանի համեմատությամբ մրցակցային առավելություն ստանալուն, ապա նախ գտնում ենք, որ 2 կամ 1 տոկոս տարբերությունը չի կարող այն էական գործոնը հանդիսանալ Վրաստանում կամ Հայաստանում գործունեություն իրականացնելու որոշումներ կայացնելու համար: Մասնավորապես, ամսական 1 մլն դրամի չափով եկամուտ ստացող սուբյեկտի համար հարկային բեռի տարբերությունը կազմելու է 10 հազար դրամից 20 հազար դրամ: Ակնհայտ է, որ այս	

				չափը որոշումներ կայացնելու վրա մեծ ազդեցություն չի կարող ունենալ: Մյուս կողմից, հարկ է նկատել, որ այս երկրների հետ համեմատությունը կատարելիս անհրաժեշտ է հաշվի առնել նաև կիրառվող արտոնությունների բովանդակությունը և մոտեցումները: Մասնավորապես, Վրաստանում գործող «A virtual zone person» համակարգից կարող են օգտվել իրավաբանական անձինք, ինչը նշանակում, որ այդ անձինք բացի իրացման շրջանառություններից հաշվարկվող հարկերից կրում են նաև շահաբաժինների վճարումից առաջացող հարկային բեռը: Այս առումով, հարկ է նկատել, որ «A virtual	

				zone person» համակարգից օգտվողները չեն ազատվում շահաբաժիններից 5 տոկոսի չափով հարկ վճարելու պարտավորությունի g: Մինչդեռ՝ ՀՀ-ում գործող շրջանառության հարկի համակարգում կարող են գործել նաև անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձինք, որոնք շահաբաժին չեն բաշխում և հետևաբար այդ մասով հարկային պարտավորությունն եր չեն առաջանում: Վրաստանում «A virtual zone person» համակարգի շրջանակում գործող սուբյեկտներին շահութահարկից ազատելու հետ կապված հայտնում ենք, որ նախագծերով	

				նույնպես առաջարկվում է ոլորտին շահութահարկի մասով արտոնություններ տրամադրել: Հարկ ենք համարում նշել նաև, որ ոլորտին հարկեր վճարելուց առհասարակ ազատելն ընդունելի չէ նաև հասարակության շրջանում հարկեր վճարելու մշակույթը ամրապնդելու տեսանկյունից:	
14.	***ԱԺ պատգամավոր Հ. Արշակյան***	«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասի» օրենքի նախագծի 9-րդ հոդված	Առաջարկում եմ Նախագիծ 2-ի 9-րդ հոդվածում ավելացնել հետևյալ դրույթը. Նախագիծ 2-ի 7-րդ հոդվածի 2-րդ մասը՝ աշխատանքային միգրանտների մասով, ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ից:	**Չի ընդունվել:** Տե՛ս, սույն առաջարկների 12-րդ կետի կապակցությամբ տրված հիմնավորումը: Պարզ չէ առաջարկության նպատակադրումը և հիմնավորումը, քանի որ առաջարկվող կարգավորումը կիրառելի է նաև աշխատանքային միգրանտների	**Չի ընդունվել:**

				մասով, և բացառությունը վերաբերում է միայն քաղաքացիություն չունեցող այն ֆիզիկական անձանց, ովքեր չունեն կացության կարգավիճակ:	
1.	***ԱԺ պատգամավոր Խ. Սուքիասյան***	Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքի նախագիծ	1.Նախագծով սահմանված կառուցակարգով ֆիզիկական անձից հարկային գործակալի կողմից պահվող և իր փոխարեն պետական բյուջե վճարվող եկամտային հարկի վերադարձը /կամ այդ չափով սուբսիդավորումը/ կազմակերպությանը խնդրահարույց է: Կազմակերպությունը, ստանալով այդ գումարը, կարող է այն ծախսել այլ ուղղություններով, կամ վերջին հաշվով ավելացնել իր զուտ շահույթի մակարդակը:	**Չի ընդունվել:** Նախագծի հիմնավորմամբ սահմանված են նախագծերի ընդունման նպատակները, ինչպես նաև անհրաժեշտությունը: Մասնավորապես նախագծերի փաթեթով նախատեսված պետական աջակցությունները և հարկային արտոնությունները միտված են բարձր տեխնոլոգիաների ոլորտի զարգացմանն ուղղված պետական քաղաքականության իրականացմանը: Հաշվի առնելով այն, որ նախագծով	**Չի ընդունվել:**

				նախատեսվող աջակցության ուղղություններով ծախսերը կատարվում են տնտեսավարող սուբյեկտների կողմից՝ առաջարկվում է աջակցությունը տրամադրել տնտեսավարող սուբյեկտներին: Բացի այդ, ֆիզիկական անձանց աջակցությունը տրամադրելու դեպքում այդ գումարները սպառվելու են անձնական նպատակներով, մինչդեռ տնտեսավարող սուբյեկտներին աջակցության տրամադրումը նշանակում է պետության կողմից ներդրում կատարել ոլորտում և նպաստել ոլորտի զարգացմանը, քանի որ այդ գումարները կրճատելու են	

				տնտեսավարող սուբյեկտների ծախսերը՝ հետևաբար նաև հանգեցնելու են մատուցվող ծառայությունների ինքնարժեքի նվազեցմանը, տնտեսավարող սուբյեկտների կողմից ներդրվելու են զարգացման համար և այլն:	
2.	***ԱԺ պատգամավոր Խ. Սուքիասյան***	Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքի նախագիծ	2.Առաջարկվող կարգավորումներով, այն աշխատակիցները, ում եկամտային հարկից վերադարձ է կատարվել գործատուին, զրկվում են գործող պետական այլ ծրագրից /հիպոթեքային վարկի տոկոսների հետ վերադարձման/ օգտվելու հնարավորությունից:	**Չի ընդունվել** Նախագծով եկամտային հարկը չի վերադարձվում, այլ պետական աջակցության տրամադրման համար որպես միավոր վերցվել է հաշվարկված եկամտային հարկի չափը: Նախատեսվող աջակցության միջոցառումների համար վճարված եկամտային հարկի մեծությունը հանդիսանում է աջակցության գումարի համար հաշվարկի հիմք	**Չի ընդունվել:**

				(գործոն): Արդյունքում, աջակցության առաջարկվող փաթեթը որևէ կապ չունի եկամտային հարկի վերադարձի գործող համակարգերի հետ, և վերջիններիս շահառուները շարունակելու են սահմանված կարգով օգտվել դրանցից:	
3.	***ԱԺ պատգամավոր Խ. Սուքիասյան***	Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքի նախագիծ	3.Ստեղծվում են անհավասար պայմաններ՝ հին ու նոր աշխատակիցների միջև:	**Չի ընդունվել:** Գտնում ենք, որ, ընդհանուր առմամբ, նման անհավասարություն չի առաջանա, քանի որ աշխատավարձի գծով ծախսերը, միևնույն է, կրում է տնտեսավարող սուբյեկտը՝ որպես գործատու:	**Չի ընդունվել:**
4.	***ԱԺ պատգամավոր Խ. Սուքիասյան***	Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքի նախագիծ	4.Նախագծով առաջարկվող մինչև 30 վարձու աշխատողներ ունեցող և 30-ից ավել աշխատողներ ունեցող գործատուների միջև աջակցության չափերի տարբերությունը հիմնավորված չէ:	**Ընդունվել է: Տե՛ս սույն ամփոփաթերթով ներկայացված՝ Կառավարության 2-րդ առաջարկությունը, որի հիման վրա**	**Ընդունվել է:**

				նախատեսվում է նոր խմբագրությամբ շարադրել նախագծի 5-րդ հոդվածը:	
5.	***ԱԺ պատգամավոր Խ. Սուքիասյան***	Բարձր տեխնոլոգիաներ ի ոլորտի պետական աջակցության մասին» օրենքի նախագիծ	5. Օբյեկտիվ հարց է առաջանում, արդյոք հիմնավորված է եկամտային հարկի՝ նախագծով սահմանված չափերով գործատուին ֆինանսական աջակցության օգտագործման արդյունավետությունը: Մեր խնդիրն է՝ երկարաժամկետ հատվածում Հայաստանի Հանրապետությունում ունենալ ոլորտում ներգրավված բարձրակարգ մասնագետների, ինժիներների թվաքանակի զգալի աճ: Ըստ այդմ՝ անհրաժեշտ են հաշվարկներ, թե SS ոլորտի քանի կազմակերպություն է գործում ՀՀ-ում, դրանցից քանիսն են հայրենական կազմակերպություններ, քանիսը՝ օտարերկրյա կապիտալով կազմակերպություններ կամ մասնաճյուղեր, ինչպիսին է այդ կազմակերպությունների բաշխվածությունն ըստ աշխատողների թվաքանակի՝ մինչև 30 աշխատակից ունեցող և դրանից ավել: Նախագծի հիմքում անհրաժեշտ է դնել հստակ ֆինանսատնտեսական հաշվարկ-հիմնավորում, թե նշված ծախսի կատարումը որքանով կավելացնի ոլորտում ներգրավված ինժիներների թվաքանակը, նրանց ներուժը և վերջին հաշվով՝ թողարկվող արտադրանքի ծավալն ու որակը: Ըստ այդմ՝ հայտնում ենք մեր դիրքորոշումն առ այն, որ ֆիզիկական անձից պահվող եկամտային հարկից կատարվող պետական աշակցությունը պետք է ուղղվի անմիջականորեն վարձու աշխատողին, իսկ շրջանառության հարկի դրույքաչափը սահմանվի մրցակցային 0 տոկոս՝ առաջարկվող 2 տոկոսի փոխարեն:	**Ընդունվել է մասնակի:** Առաջարկվող նախագծով տրամադրվող աջակցությունը չի հանդիսանում եկամտային հարկի վերադարձ, պարզապես աջակցության չափը հաշվարկելիս հիմք է ընդունվում տվյալ աշխատակցի մասով եկամտային հարկի դրույքաչափը: Շրջանառության հարկի դրույքաչափը 0 տոկոս սահմանելու առաջարկության վերաբերյալ **տե՛ս սույն ամփոփաթերթով ներկայացված՝ Կառավարության 13-րդ առաջարկությունը,**	**Ընդունվել է մասնակի:**

				որով նախատեսվում է ՀՀ Հարկային օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասի աղյուսակի 8-րդ տողում շրջանառության հարկի 5 տոկոսը դարձնել 1 տոկոս: Այս կապակցությամբ Պատգամավորի առաջարկությունն ամբողջությամբ չընդունելու հիմնավորումը հետևյալն է. գտնում ենք, որ 2 կամ 1 տոկոս տարբերությունը չի կարող էական գործոն հանդիսանալ: Մասնավորապես, ամսական 1 մլն դրամի չափով եկամուտ ստացող սուբյեկտի համար հարկային բեռի տարբերությունը կազմելու է 10 հազար դրամից 20 հազար դրամ: Ակնհայտ է, որ այս չափը որոշումներ	

				կայացնելու վրա մեծ ազդեցություն չի կարող ունենալ:	
1.	***Կառավարություն***	Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքի նախագծի **3-րդ հոդվածի 1-ին մասի 8-11-րդ կետեր**	**Հասկացություններում առկա ձևակերպումները հստակեցնելու և իրավական որոշակիություն ապահովելու նպատակով առաջարկվում է Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 8-11-րդ կետերը** շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «8) **մասնագիտական աշխատանք՝** Կառավարության կողմից սահմանված ցանկում ներառված զբաղմունքներով զբաղվող անձնակազմի մասնագիտական աշխատանք. 9) **աշխատանքային միգրանտ՝** օտարերկրյա քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող եւ Հայաստանի Հանրապետությունում օրինական աշխատանքային իրավունք ունեցող մասնագիտական աշխատանք կատարող վարձու աշխատող: Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող երկքաղաքացին սույն օրենքի իմաստով աշխատանքային միգրանտ չի համարվում. 10) **նոր աշխատող՝** առաջին անգամ բարձր տեխնոլոգիաների ոլորտ մուտք գործած եւ մասնագիտական աշխատանք կատարող վարձու աշխատող. 11) **հաշվետու ժամանակաշրջան՝** պետական աջակցության տրամադրման հաշվետու ժամանակաշրջան, որը հաշվարկվում է եռամսյակներով.»:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	
2.	***Կառավարություն***	Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքի	Առաջարկվում է աջակցության տրամադրման մոտեցումը փոխել և նախատեսել եկամտային հարկի 60% -ի չափով աջակցութուն՝ նոր աշխատողների և միգրանտների համար, ընդ որում 2025 թվականի հունվարի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը միգրանտների համար նախատեսված աջակցությունը կստանա տնտեսավարող	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	

		նախագծի **5-րդ հոդված**	սուբյեկտը, իսկ 2026 թվականի հունվարի 1-ից հետո՝ միգրանտը: Բացի նշվածից նախատեսվում է վերապատրաստման գծով արտոնությունը՝ 50%-ի չափով, ընդ որում գործուղման հետ կապված ծախսերի փոխհատուցման կարգավորումներ այլևս չեն նախատեսվի: Այսինքն, սույն առաջարկի ընդունման արդյունքում Նախագծից կհանվի մինչև 30 և 30-ից ավելի աշխատող ունեցող տնտեսավարող սուբյեկտների համար նախատեսված առանձին կարգավորումները և կկիրառվի միատեսակ մոտեցում: Միաժամանակ հոդվածում ներմուծվել է «քաղաքացիական իրավական պայմանագրով աշխատանքի վարձատրություն» ձևակերպումը, քանի որ օրենսդրությամբ քաղաքացիական և իրավական պայմանագրերով աշխատողների դեպքում չի կիրառվում աշխատավարձ և դրան հավասարեցված վճարներ, այլ կիրառվում է քաղաքացիական իրավական պայմանագրով աշխատանքի վարձատրություն ձևակերպումը: Այս կապակցությամբ առաջարկվում է. **Նախագծի 5-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ**՝ հետևյալ բովանդակությամբ. «***Հոդված 5.*** **Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության իրականացումը** 1. Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության ենթակա գործունեության տեսակները՝ ըստ տնտեսական գործունեության դասակարգիչների, սահմանում է Կառավարությունը: 2. Բարձր տեխնոլոգիաների ոլորտի կազմակերպություններին կամ անհատ ձեռնարկատերերին (այսուհետ նաեւ՝ տնտեսավարող սուբյեկտ) կամ այլ սուբյեկտներին պետական աջակցությունը տրամադրվում է սույն օրենքով: Պետական աջակցության այլ ուղղություններ կարող են սահմանվել Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով եւ այլ օրենսդրական ակտերով:		

			3. Լիազոր մարմինը, հաշվի առնելով բարձր տեխնոլոգիաների ոլորտի զարգացման գերակայությունները՝ կարող է մշակել եւ Կառավարության հաստատմանը ներկայացնել պետական աջակցության տրամադրման այլ կարգեր: 4. Կառավարության կողմից սահմանված պետական աջակցության ենթակա տնտեսական գործունեության դասակարգիչներով սահմանված գործունեությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտներին պետական աջակցությունը տրամադրվում է՝ 1) աշխատանքային միգրանտների համար, որոնք իրականացնում են մասնագիտական աշխատանք եւ համարվում են տվյալ տնտեսավարող սուբյեկտի վարձու աշխատողները: Սույն կետով սահմանված պետական աջակցությունը տնտեսավարող սուբյեկտին տրամադրվում է աշխատանքային միգրանտի՝ աշխատավարձի եւ դրան հավասարեցված այլ վճարումների կամ քաղաքացիական իրավական պայմանագրով աշխատանքի վարձատրության գծով հաշվարկված եկամտային հարկի գումարի 60 տոկոսի չափով. 2) նոր աշխատողների ներգրավման համար: Սույն կետով սահմանված պետական աջակցությունը տնտեսավարող սուբյեկտին տրամադրվում է նոր աշխատողի աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների կամ քաղաքացիական իրավական պայմանագրով աշխատանքի վարձատրության գծով հաշվարկված եկամտային հարկի գումարի 60 տոկոսի չափով: 3) Կառավարության կողմից սահմանված պետական աջակցության ենթակա տնտեսական գործունեության դասակարգիչներով սահմանված գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ մասնագիտական աշխատանք կատարող կադրերի պատրաստման եւ վերապատրաստման (այսուհետ՝ վերապատրաստում) համար: Սույն կետով սահմանված պետական		

			աջակցությունը տնտեսավարող սուբյեկտին տրամադրվում է, վերապատրաստում անցած մասնագիտական աշխատանք կատարող վարձու աշխատողի աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների կամ քաղաքացիական իրավական պայմանագրով աշխատանքի վարձատրության գծով հաշվետու ժամանակաշրջանում հաշվարկված եկամտային հարկի գումարի 50 տոկոսի չափով: 5. Կառավարության կողմից սահմանված պետական աջակցության ենթակա տնտեսական գործունեության դասակարգիչներով սահմանված գործունեությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների վարձու աշխատող աշխատանքային միգրանտին տրամադրվում է աջակցություն՝ իր աշխատավարձի եւ դրան հավասարեցված այլ վճարումների կամ քաղաքացիական իրավական պայմանագրով աշխատանքի վարձատրության գծով հաշվարկված եկամտային հարկի գումարի 60 տոկոսի չափով: 6. Սույն հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետով սահմանված մասնագիտական աշխատանք կատարող կադրերի պատրաստումը և վերապատրաստումն իրենից ենթադրում է աշխատողի մասնագիտական նոր գիտելիքների ձեռքբերումը և շարունակական կատարելագործումը, որը հավաստվում է վերապատրաստումն իրականացող համապատասխան մասնագիտական կենտրոնի կողմից տրամադրված փաստաթղթով: 7. Սույն հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի կիրառության դեպքում տնտեսավարող սուբյեկտի կողմից ներկայացված վերապատրաստման հիմնավորումներն ուսումնասիրվում և ընդունվում են լիազոր մարմնի սահմանած կարգով: 8. Սույն հոդվածի 4-րդ մասի 1-ին, 2-րդ եւ 3-րդ կետերով և 5-րդ մասով սահմանված՝ հաշվետու ժամանակաշրջանի համար տրամադրվող պետական աջակցությունների հանրագումարը չի կարող գերազանցել նույն հաշվետու		

			ժամանակաշրջանի մասով տվյալ տնտեսավարող սուբյեկտի բոլոր աշխատողների գծով հաշվարկված եկամտային հարկի գումարի 50 տոկոսը: 9. Սույն հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով սահմանված՝ նոր աշխատողների մասով պետական աջակցությունը տրամադրվում է վարձու աշխատողի՝ առաջին անգամ մասնագիտական աշխատանքի անցնելու պահից երեք օրացուցային տարիների համար: 10. Սույն հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով սահմանված պետական աջակցությունների տրամադրման կարգերը սահմանում է Կառավարությունը: 11. Սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված աջակցությունը տրամադրվում է հարկման ընդհանուր համակարգում եւ շրջանառության հարկի համակարգում գործող կազմակերպություններին եւ անհատ ձեռնարկատերերին՝ 2025 թվականի հունվարի 1-ից մինչեւ 2032 թվականի հունվարի 1-ը ընկած ժամանակահատվածի համար: Ընդ որում, շրջանառության հարկի համակարգում գործող կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը աջակցությունից օգտվելն սկսելու օրացուցային տարվան հաջորդող երրորդ օրացուցային տարին լրանալուց հետո կարող է շարունակել օգտվել աջակցությունից, եթե գործում է հարկման ընդհանուր համակարգում:		
3.	***Կառավարություն***	Բարձր տեխնոլոգիաներ ի ոլորտի պետական աջակցության մասին» օրենքի նախագծի 14-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր	Օտարերկրյա բարձր որակավորում ունեցող մասնագետների համար ՀՀ տեխնոլոգիական ոլորտը գրավիչ դարձնելու համար նախատեսվում է միգրանտների մասով աջակցությունը 2026 թվականի հունվարի 1-ից տրամադրել միգրանտներին, իսկ մինչ այդ՝ միգրանտ ներգրավող տնտեսավարող սուբյեկտին: Այդ կապակցությամբ առաջարկվում է անցումային դրույթներում կատարել փոփոխություն և նախագծի 14-րդ հոդվածի 1-ին ու 2-րդ մասերը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ կերպ.	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	

			Հոդված 14. Եզրափակիչ եւ անցումային դրույթներ 1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից եւ գործում է մինչեւ 2032 թվականի հունվարի 1-ը, բացառությամբ սույն օրենի 5-րդ հոդվածի 5-րդ մասի, որն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ից և տարածվում է աշխատանքային միգրանտ հանդիսացող վարձու աշխատողի համար 2026 թվականի հունվարի 1-ից հետո հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների կամ քաղաքացիական և իրավական պայմանագրով աշխատանքի վարձատրության գծով եկամտահարկի նկատմամբ: 2. Սույն օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետը գործում է մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը և տարածվում է աշխատանքային միգրանտ հանդիսացող վարձու աշխատողի համար մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների կամ քաղաքացիական և իրավական պայմանագրով աշխատանքի վարձատրության գծով եկամտային հարկի նկատմամբ: Փոփոխության արդյունքում ուղղել նաև համարակալումը:		
4.	***Կառավարություն***	Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքի նախագծի 10-րդ հոդվածի 3-րդ մաս	**Առաջարկում ենք Նախագծի 10-րդ հոդվածի 3-րդ մասում** «Բարձր տեխնոլոգիաների ոլորտի վարչական ռեգիստրը» բառերը փոխարինել «Վարչական ռեգիստրը» բառերով՝ քանի որ նույն հոդվածի 1-ին մասով սահմանված է այսուհետ կիրառել «վարչական ռեգիստր» ձևակերպումը:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	

5.	***Կառավարություն***	Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքի նախագծի 11-րդ հոդվածի 1-ին մաս	Նախագծի 11-րդ հոդվածի 1-ին մասում առաջարկում ենք «Հայաստանի Հանրապետության կառավարության» բառերը փոխարինել «Կառավարության» բառով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասով սահմանված կարգավորումները:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	
6.	***Կառավարություն***	Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169.24-րդ հոդված	Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169.24-րդ հոդվածով սահմանված կարգավորումները առաջարկվում է համապատասխանեցնել «**Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքի նախագծի** 11-րդ հոդվածով սահմանված կարգավորումներին, մասնավորապես օրենսգրքի 169.24-րդ հոդվածի վերնագրում և 1-ին մասում առաջարկվում է «Տեղեկատվական տեխնոլոգիաների» բառերը փոխարինել «Բարձր տեխնոլոգիաների» բառերով:	**Նախագծերի փաթեթին կցվել է նոր՝ «**Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ	Ընդունվել է:
7.	***Կառավարություն***	«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասի» օրենքի նախագծի 3-րդ հոդված	Նախագծի 3-րդ հոդվածով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում 109-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետում լրացվող նոր «բ5»-րդ ենթակետում բոլոր «**30» թվերը փոխարինել «50» թվերով և նույն հոդվածում «տեխնոլոգիական» բառերը փոխարինել «տեխնոլոգիաների» բառերով:**	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	
8.	***Կառավարություն***	«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ	Նախագծում փոփոխությունը կարգավորում էր միայն հարկ վճարողներից ձեռք բերված ծառայությունների գծով ծախսերը և այդ պարագայում բաց էր մնացել հարկ վճարողներից ձեռք բերված ապրանքների գծով ծախսերը: Հստակություն ապահովելու նպատակով	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	

		կատարելու մասի» օրենքի նախագծի 4-րդ հոդված	առաջարկվում է **նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ կետը** շարադրել հետևյալ խմբագրությամբ. «2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 10-րդ կետ. «10) Կառավարության սահմանած՝ բարձր տեխնոլոգիաների ոլորտի գործունեության տեսակների ցանկում ներառված գործունեության տեսակների մասով շրջանառության հարկ վճարողներից ձեռք բերված ապրանքների, ստացված ծառայությունների և ընդունված աշխատանքների գծով կատարվող ծախսերը:»:		
9.	***Կառավարություն***	«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասի» օրենքի նախագծի 5-րդ հոդված	Նախագծում իրավական որոշակիություն ապահովելու նպատակով առաջարկվում է՝ **նախագծի 5-րդ հոդվածի 1-ին կետի վերջին պարբերության** «կատարվում են հարկային պարտավորությունների վերահաշվարկներ» բառերը փոխարինել «կատարվում է հարկային պարտավորությունների վերահաշվարկ» բառերով, Միաժամանակ, **նույն հոդվածի երկրորդ կետում** «6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ» բառերից առաջ «1)» թիվը և նշանը փոխարինել «2)» թվով և նշանով, իսկ «համապատասխանող» բառից հետո լրացնել «և Օրենս-գրքի 121-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ մասնագիտական հանձնաժողովի դրական եզրակացությանն արժանացած» բառերը:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	
10.	***Կառավարություն***	«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասի» օրենքի նախագծի 6-րդ հոդված	Կառավարության կողմից առաջարկվում է շահութահարկով հարկման բազան առանց սահմանափակման նվազեցնելու հնարավորություն տրամադրել բացառապես բարձր տեխնոլոգիական ոլորտում գործունեություն իրականացնող և գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումներ աշխատանքներ իրականացնող տնտեսավարող սուբյեկտներին: Այդ կապակցությամբ առաջարկվում է նախագծի 6-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. **Հոդված 6.** Օրենսգրքի 123-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «2. Ռեզիդենտ շահութահարկ վճարողի հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամտից նվազեցվում են նաև՝ 1) ստացվող շահաբաժինները,	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	

			2) բացառապես Կառավարության սահմանած՝ բարձր տեխնոլոգիաների ոլորտի գործունեության տեսակների ցանկում ներառված գործունեության տեսակներով զբաղ-վող՝ անմիջականորեն ռեզիդենտ շահութահարկ վճարողի կողմից ներգրավված՝ Կառավարության սահմանած բարձր տեխնոլոգիաների ոլորտի մասնագիտական աշխատանքների ցանկում ներառված զբաղմունքներով զբաղվող անձնակազմի (բացառությամբ Հայաստանի Հանրապետությունում բնակության իրավունք (կացության կարգավիճակ) չունեցող օտարերկրյա քաղաքացիների ու քաղաքացիություն չունեցող ֆիզիկական անձանց) համար մասնագիտական աշխատանքի մասով հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների 200 տոկոսը: Սույն կետով սահմանված նվազեցումը կատարվում է՝ անկախ աշխատավարձը և դրան հավասարեցված այլ վճարումները շահութահարկով հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամտից նվազեցնելու հանգամանքից: Սույն կետի պահանջների պահպանմամբ սույն կետը կիրառվում է նաև այն ռեզիդենտ շահութահարկ վճարողների նկատմամբ, որոնք հարկային տարվա ընթացքում բացառապես Կառավարության սահմանած՝ բարձր տեխնոլոգիաների ոլորտի գործունեության տեսակների ցանկում ներառված գործունեության տեսակներից ստացվող եկամուտներից բացի ստացել են նաև այլ եկամուտներ՝ պայմանով, որ այդ եկամուտների տեսակարար կշիռը հարկային տարվա համախառն եկամտի մեջ չի գերազանցում տասը տոկոսը: 3) Կառավարության սահմանած չափանիշներին համապատասխանող և Օրենսգրքի 121-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ մասնագիտական հանձնաժողովի դրական եզրակացությանն արժանացած գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների աշխատանքներում անմիջականորեն ռեզիդենտ շահութահարկ վճարողի կողմից ներգրավված՝ Կառավարության սահմանած բարձր տեխնոլոգիաների ոլորտի մասնագիտական աշխատանքների ցանկում ներառված զբաղմունքներով զբաղվող անձնակազմի		

			(բացառությամբ Հայաստանի Հանրապետությունում բնակության իրավունք (կացության կարգավիճակ) չունեցող օտարերկրյա քաղաքացիների ու քաղաքացիություն չունեցող ֆիզիկական անձանց) համար մասնագիտական աշխատանքի մասով հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների 200 տոկոսը: Սույն կետով սահմանված նվազեցումը կատարվում է անկախ աշխատավարձը և դրան հավասարեցված այլ վճարումները շահութահարկով հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամտից նվազեցնելու հանգամանքից: Սույն մասի 2-րդ և (կամ) 3-րդ կետերով սահմանված նվազեցումները կամ դրանց հանրագումարը տվյալ հարկային տարվա համար չի կարող գերազանցել սույն բաժնով սահմանված կարգով (առանց սույն մասի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված նվազեցումների) հաշվարկված հարկման բազայի 50 տոկոսը, բացառությամբ սույն մասի երրորդ պարբերությամբ սահմանված դեպքի: Անկախ սույն մասի երկրորդ պարբերությամբ սահմանված դրույթներից՝ համախառն եկամտից նվազեցման ենթակա գումարի՝ հարկման բազայի 50 տոկոսը չգերազանցելու սահմանափակումը չի տարածվում սույն մասի պահանջների պահպանմամբ գիտական հետազոտություններ և փորձարարական մշակումներ իրականացնող այն ռեզիդենտ շահութահարկ վճարողների վրա, որոնք եկամուտները ստացել են բացառապես գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների աշխատանքներից կամ միաժամանակ ստացել են այլ եկամուտներ՝ պայմանով, որ այդ եկամուտների տեսակարար կշիռը հարկային տարվա համախառն եկամտի մեջ չի գերազանցում տասը տոկոսը: Օրենսգրքի 121-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով սահմանված մասնագիտական հանձնաժողովի կողմից տրամադրված դրական եզրակացությունը չեղյալ ճանաչվելու դեպքում կատարվում է հարկային պարտավորությունների վերահաշվարկ՝ հիմք ընդունելով Օրենսգրքով սահմանված ընդհանուր կարգավորումները:»:		

11.	***Կառավարություն***	«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասի» օրենքի նախագծի 7-րդ հոդված	Նախագծերի փաթեթում հասկացությունների և ձևակերպումների համապատասխանությունը և իրավական որոշակիությունն ապահովելու նպատակով առաջարկվում է նախագծի **7-րդ հոդվածի 2-րդ կետում** «Կառավարության կողմից հաստատված բարձր տեխնոլոգիական ոլորտի մասնագիտական աշխատանքների ցանկում ներառված մասնագիտական անձնակազմին» բառերը փոխարինել «Կառավարության սահմանած բարձր տեխնոլոգիաների ոլորտի մասնագիտական աշխատանքների ցանկում ներառված զբաղմունքներով զբաղվող անձնակազմին» բառերով, իսկ նույն մասի վերջին պարբերության մեջ «կատարվում են հարկային պարտավորությունների վերահաշվարկներ» բառերը փոխարինել «կատարվում է հարկային պարտավորությունների վերահաշվարկ» բառերով:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	
12.	***Կառավարություն***	«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասի» օրենքի նախագծի 7-րդ հոդված	Առաջարկվում է նախագծի **9-րդ հոդվածի 2-րդ մասում** «Օրենսգրքի 123-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի» բառերից հետո լրացնել «և նույն մասի երկրորդ պարբերության» բառերը, լրացվող պարբերության գործողությունը 2024 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների նկատմամբ կիրառելու նպատակով	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	
13.	***Կառավարություն***	«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» 2024 թվականի հունիսի 12-ի ՀՕ 285-Ն օրենքի 12-րդ հոդված	Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ մասը՝ «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 8-րդ հոդվածով նախատեսված փոփոխությունն առաջարկվում է կատարել «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» 2024 թվականի հունիսի 12-ի ՀՕ 285-Ն օրենքում, քանի որ փոփոխության ենթարկվող նորմը դեռևս ինկորպորացված չէ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում, ըստ որի՝ ՀՀ հարկային օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասի	**Նախագծերի փաթեթին կցվել է նոր նախագիծ՝** ««Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ:	Ընդունվել է:

			աղյուսակի 8-րդ տողում շրջանառության հարկի 5 տոկոսը նախատեսվում է դարձնել 1 տոկոս: Նշվածի արդյունքում «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասի» օրենքի նախագծից առաջարկվում է հանել 8-րդ հոդվածը և ապահովել հոդվածների համարակալման հերթականությունը:		